

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻ ԱՌԻԹՈՎ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր անգուցական հայրենիք՝ Հայաստանի Հանրապետությունը, բոլորեց ծանր վերիվայրումներով բեռնաւորուած իր պանծալի անկախութեան 19րդ տարին:

Սեպտեմբեր 21, 1991-ին, Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան կապակցութեամբ հրատարակուած Հռչակագիրը մեծ յոյսերով տոգորեց մեր բազմաչափ ժողովուրդի սիրտերը: Հռչակագիրը մարդու իրաւունքներու եւ ազգերու ազատ ինքնորոշման միջազգային նորմերուն հաւատարիմ մնալու խոստումով, կուգար իր ժողովուրդին եւ միջազգային հանրային կարծիքին առջեւ յանձնառութիւն վերցնել, հաստատելու ժողովրդավարական եւ իրաւական հասարակարգ:

Այս պիտի նշանակէր, որ մեր նորանկախ հայրենիք պիտի հետապնդէր քաղաքականութիւն մը, որ հաստատուած ըլլար ազգային ինքնութեան ամրապնդման վրայ: Դաւանէր մեր դարաւոր երազներու նուիրագործման պահանջատիրութեան իրողութիւնը: Ծանրանար մեր անցեալէն ժողովրդավարական կոտորածներով տրեւրու դարձանման, մեր հողու ժողովուրդին տէր դառնալու վնասկանութեան եւ իբրեւ ժողովուրդ եւ իշխանութիւն, հաւաքական կեանքով օրինաւոր, համերաշխ, արդար բարգաւան, այլապէս, կառուցողական կեանքի ստեղծման վրայ: Անոնք պիտի գային աստիճանաբար ամրացնելու Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական խարխիւները: Հայաստան աշխարհի անկախութեան ձեռքբերումը, իր նուիրական Անկախութեան Հռչակագրով, կու գար հպարտութեամբ, հրնուանքով եւ լաւատեսութեամբ գեղով մէն մի հայու սիրտը: Փառնու պատիւ մեր ազատատենչ բազմաչափար եւ ստեղծագործ ժողովուրդին, որ կանգնեց իր հայրենիքի անկախութիւնը եւ պատիւ անոնց՝ որոնք երկնեցիկ անոր հպարտութիւնը հռչակագիրը:

Ուրախ էր հայ ժողովուրդը, որ աւելի քան վեց հարիւր տարի, օտարի ներքաններուն տակ մշտապէս տրորուելէ, ծով արիւն քափե-

Շաբ.ը էջ 6

ԱՂԹԱՍԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՒՅՊ ՊԱՏԱՐԱԳԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ



Ժողովուրդը Սուրբ Խաչ եկեղեցւոյ շուրջ կը հետեւի պատմական պատարագին

Կիրակի, Սեպտեմբեր 19-ին Վանայ լիճի վրայ գտնուող Աղթամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ 95 տարուայ ընթացքին առաջին անգամ ըլլալով մատուցուեցաւ հայկական պատարագ, Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ՝ Արամ սրբազան Աթէշեան գլխաւորութեամբ:

Հայկական աղբիւրներու համաձայն, եկեղեցական արարողութեան ներկայ գտնուած են շուրջ հազար հոգի, որոնց մեծ մասը եղած են Պոլիսէն ժամանած հայեր: Պատարագին ներկայ գտնուած են նաեւ թուրքիոյ մէջ հաւատարմագրուած օտար դիւանագիտական ներկայացուցիչներ եւ Վանի քաղաքապետը:

Եկեղեցին փոքր ըլլալով պատարագին մասնակցած է մօտ 50 հոգի, իսկ մնացեալները հետեւած են եկեղեցւոյ մօտ տեղադրուած 2 խոշոր պատարներու վրայ:

Կղզիի վրայ ապահովութեան հսկած են 50 թուրք ոստիկաններ:

Նախապէս պատարագին մասնակցելու շուրջ համաձայնութիւն տուած էր նաեւ Մալթա Աթոռ Սուրբ Էջմիածինը: Սակայն, վերջին շաբաթներուն այդ որոշումը վերատեսութեան ենթարկուեցաւ երբ յայտնի դարձաւ որ, եկեղեցւոյ գմբէթին խաչ տեղադրելու թրքական կառավարութեան խոստումը կը ձգձգուի:

Պատմական պատարագի ընթացքին Արամ Արք. Աթէշեան ելոյթ

ունենալով հայերուն եւ թուրքերուն եղբայրութեան կոչ ըրած է: Կղզի ժամանած հաւատացեալներէն ոմանք ձեռքներին փայտէ պատրաստուած խաչեր ունեցած են, որպէս բողոք եկեղեցւոյ գմբէթին խաչ տեղադրուելուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱՒ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Սեպտեմբեր 21-ին, Անկախութեան օրուայ առթիւ Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան եւ երկրի բարձրաստիճան պաշտօնեաները այցելեցին Եռաբլուր եւ ծաղկեապակներ դրին անյայտ կորած ազատամարտիկներու չիշատակը յաւերժացնող յուշակոթողին:

Երեկոյեան Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրէն ներս տեղի ունեցաւ Անկախութեան տօնին նուիրուած պաշտօնական ընդունելութիւն, որուն հրաւիրուած էին նաեւ նորանկախ Հայաստանի նախկին նախագահները: Սակայն, անոնցմէ ունէ չէր ընդառաջած Սերժ Սարգսեանի հրաւերին:

Ռոբերդ Քոչարեանի մամուլի քարտուղար Վիկտոր Սողոմոնեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, ան Մոսկուա կը գտնուի:

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսիլեան իր կարգին նոյն ռատիոկայանին

Շաբ.ը էջ 5

Հ.Կ.Բ.Ս.-Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Ի ՊԱՏԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԱՐՄԱՇ ԵՊՍ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ



Հարաւային Գալիֆորնիոյ Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը, անցեալ Հինգշաբթի, Սեպտեմբերի 16ին, 2010, Փասատինայի իր կեդրոնին մէջ,

ընդունելութիւն մը սարքած էր ի պատիւ Դամասկոսի Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալ-

Շաբ.ը էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 26, 2010

VERDUGO PARK - ԿԼԵՆՏԷՅԼ

FREE ADMISSION
 UMSRC ԱՅՍԷ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՍԵՅՐԱՆ ՕՐԱՆԵԱՆԻ ՇԱՆՍԸ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի գինուած ուժե-
րում արձանագրուած միջադէպի
մասին յայտնի հոլովակի ի յայտ
գալուց յետոյ որքան շատ էին
գայրացողները, այդքան էլ թե-
րեւս բաւականաչափ էին մարդիկ,
ովքեր համարում էին, որ տեղի
ունեցածը մի դաւադրութիւն է
բանակի, պետութեան դէմ: Առա-
ջիններից մէկը դա ասում էր
պաշտպանութեան նախարար Սէյ-
րան Օհանեանը, նշելով, որ նման
բան էլէր կարող լինել բանակում
եւ դա սարքովի դաւադրութիւն է,
ինչպէս ոստիկանապետ Ալիկ
Սարգսեանն էր առաջինը յայտա-
բարում, որ Չարենցաւանի ոստի-
կանութեան բաժնում մահացած
Վահան Խալաֆեանը ինքնասպան
է եղել, ոչ թէ բռնութեան է
ենթարկուել ու սպանուել:

Բայց, բանակի գործը կար-
ծես թէ այլ ընթացք է ստանում,
քան Վահան Խալաֆեանինը: Եթէ
Խալաֆեանի պարագայում գործի
ընթացքում ամէն ինչ անում են,
որպէսզի հաստատուի հենց ինք-
նասպանութեան վարկածը, ապա
բանակի պարագայում «դաւադ-
րութեան» վարկածը կարծես թէ
չի հաստատուում, եւ ի յայտ է
գալիս հոլովակի «հերոս» սպան,
ով բռնութիւն է գործադրում
գինուորների հանդէպ: Թէեւ
պաշտպանութեան նախարարու-
թիւնը պաշտօնապէս չի նշել
սպայի ով լինելը, այդուհանդերձ
պաշտօնապէս յայտարարուել է,
որ հոլովակի «հերոսները» յայտ-
նաբերուել են: Նոյնիսկ մամուլին
արդէն յայտնի է անունը այդ
սպայի, ինչը այս նիւթի շրջանա-
կում այդքան էլ էական չէ:

Իսկանն այն է, որ սպան
յայտնաբերուել է: Դա իհարկէ
որեւէ բարդութիւն էլ չի ներկա-
յացնի եւ այսպէս ասած ուշաստ-
կովի մակարդակի գործերից էր
երեւի, քանի որ կար հոլովակը,
կար ձայն, կային դէմքեր, եւ կան
ժամանակակից տեխնոլոգիաներ,
որոնք հնարաւորութիւն տալիս
են բաւական աղոտ պատկերներից
ստանալ յստակ պատասխաններ:
Մի խօսքով, ցանկութեան դէպքում
գործը լիովին բացայայտելի էր,
եւ այստեղ էականն այդ ցանկու-
թեան արտայայտութիւնն է:

Իհարկէ, դեռ յայտնի չէ, թէ
պաշտպանութեան նախարարու-
թիւնը ինչպէս կը մատուցի դէպ-
քը: Պէտք է բացատրել, որ կ'ասեն,
թէ սպան պարգապէս քշում էր
ասենք գինուորի ականջներին
նստած ճանճը: Հնարաւոր է նաեւ,
որ ասեն նոյնիսկ, թէ գինուորներն
են սպայի վրայ բռնութիւն գոր-
ծադրել, հարբացրել նրան, եւ երբ
նա դարձել է անկառավարելի,
ստիպել են հարուածել իրենց:

Հայաստանում ամենեւին էլ
նոր չէ պրակտիկան, երբ կարող
են յանցանքը շուռ տալ եւ
մեղաւորին պատժելու փոխարէն
պատժեն իրականում տուժող
մարդուն: Ի վերջոյ, դեռ թարմ է
Աշտարակի դէպքը, երբ մարդու
դատերը բռնաբարել է ինչ որ մի
տականք, իսկ քննիչները ծեծում
են այդ բռնաբարուող աղջկան եւ
ստիպում, որ նա ասի, թէ հայրն է
իրենց բռնաբարել, յետոյ ծեծում
են հորը, որ նա խոստովանի, թէ

բռնութեան է ենթարկել հարա-
գատ դատերն ու բռնաբարել: Այն-
պէս որ, Հայաստանի իրաւապահ եւ
իրաւապահական համակարգում
ամէն ինչ հնարաւոր է: Բայց,
հանգամանքը, որ «դաւադրու-
թեան» վարկածը հաստատուելուն
ուղղուած գործողութիւնների փո-
խարէն գինուորի հրամանատարու-
թիւնը գնացել է սպային յայտնա-
բերելու ճանապարհով, խօսում է
որոշակի նոր իրավիճակի մասին:

Ի՞նչ է դա: Հայաստանի բա-
նակի ղեկավարութիւնը, աւելի
կոնկրետ նախարար Սէյրան
Օհանեանը, հասարակական մեծ
արձագանքի ճնշման տակ փորձում
է ցոյց տալ, որ ինքը սկզբունքա-
յին է եւ կը գերադասի իր խօսքի
վրայով անգամ անցնել ու յայտ-
նաբերել մեղաւորին, քան թէ
առաջնորդուել «ասուել է դա-
ւադրութիւն է, ուրեմն դաւադ-
րութիւն է» աւանդոյթով, թէ՛
պարզապէս Սէյրան Օհանեանը
գգում է, որ բանակում առկայ
միջադէպերի քարոզչական բացա-
սական ֆոնը կամայ թէ ակամայ,
անկախ ամէն ինչից որոշ մարդիկ
փորձելու են օգտագործել իր դէմ,
ու այդ պարագայում հակազդելու
լաւագոյն միջոցը բացայայտում-
ների ճանապարհով գնալն է: Այ-
սինքն, գուցէ Սէյրան Օհանեանը
բացայայտումների գնում է ոչ թէ
ճշմարտութեան հետեւորդ եւ
սկզբունքային լինելու, այլ պար-
զապէս ինքնասպանութեան
այլ ելք չտեսնելու պարագայում:
Դա թերեւս ռացիոնալ մօտեցում
է, որը բխում է թէ Սէյրան
Օհանեանի, թէ հասարակութեան,
թէ բանակի, թէ ընդհանրապէս
պետութեան շահից:

Թէկողզ բացայայտումները
լինեն զուտ անձնական անվտան-
գութեան շարժառիթով, միեւնոյն
է, դա արդէն իսկ դրական
իրողութիւն է: Բայց խնդիրն այն
է, որ միգուցէ այդ բացայայտում-
ների ճանապարհին հաստատուն
կանգնելու շնորհիւ ամրացնելով
իր դիրքը հասարակութեան վստա-
հութեան մթնոլորտով, Սէյրան
Օհանեանը փորձի ոչ թէ շարու-
նակել այդ ճանապարհով մինչեւ
վերջ, այլ կէսից աւելի ամուր
թիկուռք ունենալով անցնել Հա-
յաստանի իշխանական համակար-
գի համար աւանդական ստուերա-
յին պայմանաւորութիւնների
ճանապարհին: Այդուհանդերձ, դրա
էֆեկտը շատ կարճ կը լինի, քանի
որ այդ ճանապարհին անցնելը
նշանակում է նորից յայտնուել
հենց դրանից եկող քարոզչական
գրոհների վտանգաւոր հեռանկարի
առաջ: Իսկ այդ հեռանկարը վաղ
թէ ուշ նորից է Սէյրան Օհան-
եանի առաջ կանգնելու փաստի
կարգավիճակով: Դրա համար էլ
Սէյրան Օհանեանին թերեւս պէտք
է բացայայտման ճանապարհով
գնալ մինչեւ վերջ, քանի որ միայն
այդպէս կը կարողանայ պաշտպանել
ինքն իրեն՝ ընդ որում անկախ
նրանից, թէ արդեօք կը մնայ
նախարարի պաշտօնին, թէ պաշտօ-
նանկ կարուի իբր պահի, եւ թէ
բանակի հեղինակութիւնը կը պաշտ-
պանի նա այդ ճանապարհով մինչեւ
վերջ գնալու դէպքում, ցոյց տա-
լով, որ տականքը հայկական բանա-
կում չի մնում անպատիժ:

«ԼՐԱԳԻՐ»

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՋՉԱՄԵՔԵՆԱՆ

ԵՒ ԻՐ ՍՊԱՍԱԻՈՐՆԵՐԸ

ԿԱՐԷՆ ՅԱԿՈՐԲԱՆԵԱՆ

Հայ-թուրքական «մերձեց-
ման» գործընթացը տապալուեց,
եւ սկիզբ դրուեց հայ-ուսական
«մեղրամսին»:

Ինչպէս «Ֆուտբոլային»
դիւանագիտութեան, այնպէս էլ
հայ-ուսական պայմանագրի
կնքման փուլում իշխանական
քարոզչամեքենան շատ պարզու-
նակ ու կանխատեսելի սխեմայով
աշխատեց: Իսկ սխեման այդ հե-
տեւեանն է. ինչ քայլ էլ որ
արոււմ է Սերժ Սարգսեանի կող-
մից՝ գնահատոււմ է որպէս միակ
հնարաւորը եւ լաւագոյնը:

Չաւեշտն այն է, որ միանշա-
նակ դրական գնահատականի են
արժանանում ՀՀ նախագահի
անխտիր բոլոր որոշումները,
որոնք շատ յաճախ միմեանց
հակասում են: Մէկ կենտրոնից
տրուած հրահանգով անմիջապէս
հեռուստաէկրաններին ու թերթե-
րի էջերին են յայտնուում մարդ-
կանց որոշակի շրջանակներ, ով-
քեր, փրփուրները բերաններին,
փառաբանում են Սարգսեանի
արածն ու չարածը:

Արդէն լրիւ կանխատեսելի է
դարձել Սերժ Սարգսեանին գո-
վերգող եւ՝ «վերլուծաբանների»,
եւ՝ «քաղաքական գործիչների»
շրջանակը: Սխեման նոյն ձեւով
աշխատում է բոլոր դէպքերում:
Տպաւորութիւն կայ, թէ իշխանա-
կան քարոզչութեան պատասխա-
նատուներն այլուր են նոր
բաներ մտածել ու նոր դէմքեր
գտնել, ուստի նոյն մարդկանց
օգտագործում են տարբեր դիր-
քորոշումներին միեւնոյն դրական
գնահատականը տալու համար ու
այդպիսով շատ գուարճալի տեսա-
րան ենք ստանում:

Օրինակ՝ հիմա, ի տարբերու-
թիւն նախորդ տարուայ այս նոյն
ժամանակահատուածի, գերակա-
յող են «հայրենասիրական» շեշ-
տադրումները եւ «թուրքը մնում
է թուրք» մօտեցումը, բայց
իշխանական քարոզչութեան մէջ
օգտագործուող անձինք կրկին
նոյնն են: «Վերլուծաբաններն»
իրենց գործն արդէն արել են, եւ
հիմա հերթը հասել է «քաղաքա-
կան» կոչուած գործիչներին:

Մամուլը այժմ հեղեղուած է
մեծ ու փոքր տրամաչափի
դէմքերով, ովքեր փառաբանում
են Սերժ Սարգսեանի «նախաձեռ-
նողականութիւնը» Թուսաստանի
մասով: Օրերս այդ «ֆուտբոլային»
աչքի էր ընկել ՀՀԿ-ական
բիզնես-լեդի Հերմինէ Նաղդալ-
եանը, ում կարելի է համարել
ՀՀԿ-ական շրջանակների «բե-տե-
հուններից», ինչպիսիք մենք հան-
դիպում ենք լեւոնական տիրոջ-
թում: Այսինքն՝ տիկին Նաղդալ-
եանը, դեռ հրահանգը չստացած,
պատրաստ է այնպիսի «սերենադ-
ներ» նուիրել Սերժ Սարգսեանի
վարած քաղաքականութեանը, որ
նոյնիսկ «քոքուած» սերժանապա-
տակները կարող են այդ գործում
աշակերտիկի կարգավիճակում
յայտնուել:

Տարածուած տեղեկութիւննե-
րի համաձայն՝ սոյն պատգամաւոր-
ութիւն տարատեսակ բիզնեսներ
ունի՝ սկսած հանքերից, վերջաց-
րած երթուղայինի գծատիրու-
թեամբ: Եւ ասա պարզոււմ է, որ
բիզնեսից ազատ ժամանակ տիկին
Նաղդալեանը նաեւ աշխարհաբա-

ղաքական վերլուծութիւններ է
սիրում անել ու ձեռքի հետ մի
լաւ գովերգել Սերժ Սարգսեանի
ուսական «վոյաժները»:

Թերթերից մէկին տուած
հարցազրոյցում տիկինը այս ու
այն կողմից ներկայացնում էր
հայ-ուսական պայմանագրի բա-
րեմասնութիւնները: Այլընտրանք
չկայ, սա է ճանապարհը՝ նկատոււմ
էր Նաղդալեանը՝ հիմնաւորելով
ուսագաւազանների ժամկէտի երկա-
րացումը:

Հետաքրքիրն այն էր, որ նոյն
Հերմինէ Նաղդալեանն անցած
տարի հիացական գնահատականներ
էր տալիս եւ գովերգող բառապա-
շար էր օգտագործում, բայց արդէն՝
թուրքիայի հետ Ս. Սարգսեանի
քրովայութեան մասով: Այն օրերին
էլ ասոււմ էր, թէ հայ-թուրքական
արձանագրութիւններն են լաւը, եւ
դրան այլընտրանք չկայ:

Հ. Նաղդալեանը, հաւանաբար,
շատ չի խորանում իրերի դու-
թեան մէջ: Ասում են գովիր «Ֆուտ-
բոլը»՝ ինքը դա անում է: Հիմա
ասել են «էն սհաթը» փառաբանիր՝
տիկինը կրկին գործի է անցել:
Չաւեշտն այն է, որ պատգամաւոր-
ութեան բառապաշարն այս մէկ
տարում չի փոխուել: Բայց չէ որ
հայ-ուսական վերաթարմացուած
պայմանագիրն ի յայտ եկաւ
որպէս արդիւնք «Ֆուտբոլային»
դիւանագիտութեան տապալման,

Շաբ.ը էջ 4

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՉՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐԵԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ը ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԸ



Մատենադարանի մօտ ժողովուրդը կը հետևի հանրահալաֆին

Հակառակ իշխանութեան ներկայացուցիչներին կանխատեսումների եւ մարզերից դէպի Երեւան եկող ավտոճանապարհների՝ արդէն ավանդական դարձած արգելափակմանը, Սեպտեմբեր 17-ին Հայ Ազգային Կոնգրէսի հանրահալաֆը, որը տեղի ունեցաւ Մատենադարանի մօտ, նախորդ բոլոր հանրահալաֆներից մարդաշատ էր: Մարդիկ եկել էին ընդդիմութեան կողմից աւելի ակտիւ եւ գործնական գործողութիւնների ակնկալիքով: Թէ որքանով այդ ակնկալիքներն արդարացան՝ դժուար է ասել, բայց որ հանրահալաֆն իսկապէս բովանդակալից էր, ինչպէս խոստանում էին նրա կազմակերպիչները՝ փաստ է: Հանրահալաֆը սկսուեց նրանով, որ այն վարող ՀՀԿ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը յայտարարեց, թէ «ՀԱԿ-ն այս հանրահալաֆով սկսում է գործնական, բազմաբնույթ, լիքը երթերով, ցույցերով, ակցիաներով կոնկրետ գործողութիւնների ընթացքը: Եւ մենք այս ակտիւ գործընթացով հասնելու ենք մեր ուզածին. ե՛ւ Ազատութեան հրապարակն ենք ազատագրելու, ե՛ւ այս երկիրը: Կարեւորը, որ ՀԱԿ ոչ մի կուսակցութիւն նահանջ չի ապրել, եւ ողջ թիւը պատրաստ է շարունակել իր գործը՝ առաջ գնալու եւ յաղթանակը մինչեւ վերջ հասցնելու կամքով եւ տրամադրուածութեամբ»:

Ելույթներ ունեցան նախկին գինդատախազ եւ ՀՀ գլխաւոր դատախազի նախկին տեղակալ ու քաղբանտարկեալ Գագիկ Զհանգիրեանը, ՀԱԿ-ի արտաքին յարաբերութիւնների յանձնարարի ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեանը, ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան: Ընդդիմութեան հանրահալաֆը եզրափակեց ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Նա անդրադարձաւ, իր ձեւակերպմամբ՝ ասեկոսներին, որոնց հակառակ պնդեց, թէ «իշխանափոխութիւնը եղել եւ մնում է ՀԱԿ-ի գլխաւոր խնդիրը, եւ մենք հետեւողականօրէն ու անդադրում հետապնդելու ենք այն՝ անկախ նրանից, թէ որքան յամառ կը լինի ավագակապետութեան դիմադրութիւնը, որքանով մեզ կ'օժանդակեն երկրի ճակատագրով մտահոգ միւս քաղաքական ուժերը եւ ո՛ր չափով միջազգային հանրութիւնը կը շարունակի աստարել Հայաստանի յանցագործ իշխանութիւններին: Իշխանափոխութեան խնդրի ձգձգումը, սակայն, չի նշանակում, որ մենք սուրբ պահանջներն իրավիճակը թէկուզ

որոշ չափով շտկելու մասին չպէտք է մտածենք: Մենք մշտապէս պնդելու այսօր էլ համարում ենք, որ երկու վճռական քայլ կարող է կտրուկ կերպով փոխել դարաբաղեան կարգաւորման գործընթացի անբարենպաստ զարգացումը. Հայաստանի ներքին կեանքի ազատականացումը՝ ժողովրդավարութեան սահմանափակումների վերացումը, քաղբանտարկեալների ազատ արձակումը եւ ներազգային համերաշխութեան հաստատումը, ԼՂ-ի՝ որպէս հակամարտութեան լիիրաւ կողմի ԵԱՀԿ Բուդապէշտեան գագաթաժողովի որոշմամբ սահմանուած կարգափոխման վերականգնումը»:

Նա նաեւ ՀԱԿ-ի անունից յայտարարեց. «Թէեւ մենք կողմ ենք Ղարաբաղի հարցի շուտափոխութեանը, բայց վճռականապէս դէմ ենք գործելու կարգաւորման ցանկացած ծրագրի, որում ԼՂ-ն ներկայացուած չէ որպէս հակամարտութեան կողմ, ինչպէս եւ ցանկացած համաձայնագրի, որի տակ չի լինի վերջինիս ներկայացուցիչի ստորագրութիւնը: Մենք նոյն վճռականութեամբ դէմ ենք լինելու նաեւ հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացմանը, քանի դեռ նրանցից չի հանուել հայ եւ թուրք պատմաբաններից կազմուած միջկառավարական յանձնաժողովի ստեղծմանը վերաբերող դրոյթը: Մենք պահանջելու ենք նաեւ, որ ԼՂ կարգաւորման վերջնական համաձայնագիրը հանրաքուէի դրուի ԼՂ-ում եւ Հայաստանում, ինչն արտառոց չպէտք է համարել, քանի որ ժամանակին նման գաղափար եղել է Միւնխի խմբի համաձայնագրութեան առաջարկներում»:

Սարգսեանը որեւէ գիշում կատարելու ժողովրդական մանդատ չի ստացել, քանի որ նախ իր նախընտրական ծրագրում հասարակութեանը հայ եւ թուրք պատմաբանների յանձնաժողով ստեղծելու, ԼՂ-ն կարգաւորման գործընթացից դուրս թողնելու կամ Հայաստանում օտարալեզու դպրոցներ բացելու խոստում չի տուել, եւ երկրորդ՝ պարզապէս ընտրուած նախագահ չէ: Հետեւաբար, նա ընդհանրապէս որեւէ որոշում կայացնելու, հրամանագիր արձակելու, օրէնք վաւերացնելու եւ համաձայնագիր կնքելու իրաւունք չունի, իսկ մինչ այժմ նրա կողմից ստորագրուած բոլոր որոշումները, հրամանագրերը, օրէնքներն ու համաձայնութիւնները գուրկ են իրաւական ուժից»:

Կոնգրէսի հանրահալաֆն ավարտուեց երթով: Յաջորդ հանրահալաֆը տեղի կ'ունենայ Հոկտեմբերի 15-ին:

ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐ.- «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՅՊԱՆՈՒՄ Է ՍՓԻՒՔԱՅԱՅԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԱՆՅԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Սփիւռքի նախարարութեանը ամենաշատը դիմում են խաբէութեան դէպքերի առթիւ, մաքսային եւ դատական մարմիններում «խայտառակ պատմութիւնների» պատճառով, երկքաղաքացիութեանը վերաբերող հարցերով: Այս մասին NEWS.am-ի թղթակից հետզրոյցում յայտնել է Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը: Նրա խօսքով, շատ են նաեւ կենցաղային հողի վրայ անախորժ իրավիճակները, որոնք վկայում են, որ հասարակութեան մի մասը դեռեւս անհանդուրժող վերաբերմունք ունի Հայաստանում հաստատուել ցանկացող սփիւռքահայերի նկատմամբ: «Մենք շատ հիւրասէր ազգ ենք, բայց երբեմն նաեւ՝ ծայրայեղօրէն անհանդուրժող»- ասաց Հ. Յակոբեանը: Նա մի սփիւռքահայի օրինակ բերեց, որ Երեւանում տուն էր գնել, այնուհետեւ՝ աւտոտնակ, բայց հարեւանն անընդհատ խանգարել է մեքենան կանգնեցնել ավտոտնակում այն պատճառաբանութեամբ, թէ «դու ո՞վ եղար, որ ստէ գարաժ դնես»: Կենցաղային բնույթի նմանատիպ իրավիճակները իրականում հանրապետութիւնում ստեղծում են անհանդուրժողականութեան մթնո-



Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան

լորտ, խանգարում հայրենադարձութեանը:

Հ. Յակոբեանն ասաց, որ «Արի տուն» ծրագրով պետութիւնը ծախսերի միայն մի մասն էր կատարում՝ երեխաների համար ծախսելով 10 դոլար, որին ընտանիքները աւելացնում էին եւս 50 դոլար իրենց բիւջէից: «Ահա այդպէս հիւրասիրել գիտենք, բայց չեմ կարողանում հասկանալ, թէ որտեղից է անհանդուրժողականութիւնը այն մարդկանց նկատմամբ, որ ցանկանում են հաստատուել, այլ ոչ թէ հիւր լինել հայրենիքում», - ասաց նախարարը:

ՀՀ-Ի ՓՈԽՆԱԽԱԳԱՐԸ ԱՆՅԱՍԿԱՆԱԼԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

«Ռուսաստանը Հայաստանի ստրատեգիական գործընկերն է, եւ որեւէ էական փոփոխութիւն դրա մէջ չկայ», - յայտարարեց Հայաստանի հանրապետական կուսակցութեան փոխնախագահ, Ազգային ժողովի պատգամաւոր Ռազմիկ Զոհրաբեանը՝ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մեկնաբանելով Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի յայտարարութիւնը:

Ուրբաթ օրը կայացած հանրահալաֆում իր ելույթում Տէր-Պետրոսեանը նշել էր, մասնաւորապէս, որ Հայաստանը կորցնում է Հարաւային Կովկասում Ռուսաստանի միակ ստրատեգիական գործընկերը լինելու առաւելութիւնը, եւ որ Ղարաբաղեան հակամարտութեան լուծման նոր ձեւաչափ է առաջանում՝ ռուս - թուրք - ադրբեջանական, որը գալիս է փոխարինելու ԵԱՀԿ-ի Մինսկի խմբին:

Զոհրաբեանը յիշեցրեց, որ «Հայաստան - Ռուսաստան ռազմաբազայի պայմանագիրը երկարացուեց, որտեղ Ռուսաստանը հանդիսանում է Հայաստանի անվ-

տանգութեան երաշխաւորը»: «Եւ քանի որ նաեւ Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորը Հայաստանն է, ապա ստացուած է այսպէս՝ իրենք երաշխաւորում են Հայաստանի անվտանգութիւնը, մենք երաշխաւորում ենք Ղարաբաղի անվտանգութիւնը», - կարծում է հանրապետական պատգամաւորը:

«Այստեղ ստրատեգիական պարտնջոր հաւասարութիւն նույնիսկ չկայ էլ Ադրբեջանի հետ: Իհարկէ, նրանք յայտարարել են, որ Ադրբեջանը նոյնպէս Ռուսաստանը համարում է ստրատեգիական իրեն գործընկեր, բայց, իհարկէ, այդ հաւասարութիւնը այդքան էլ հաւասար չի, եւ դա դրական սալդոյով Հայաստանի կողմն է», - պնդեց իշխող կուսակցութեան փոխնախագահը՝ յաւելելով. - «Ես խնդիրներ չեմ տեսնում Հայաստանի համար, որովհետեւ սա ընդամէնը իր [Լեւոն Տէր-Պետրոսեանի] մօտ գեղարուեստական ձեւակերպում է՝ տարածաշրջանի հետ կապուած, իսկ այն, ինչ իրականում կայ՝ կոնկրետ նժարի վրայ դրուած, հաշուարկուած ձեւաչափեր են»:

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ. «ՆՄԱՆ ՄՕՏԵՑՈՒՄԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ՀՆԱՈՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԱՐԴԻՒՆՔ»

«Եթէ մենք իսկապէս փորձէինք քայլեր ձեռնարկել ԲՀԿ-ն թուլացնելու համար, ԲՀԿ-ն իսկապէս կը թուլանար».- ՄԱԱ-ում հրաւիրուած ասուլիսում ասել է ՀՀԿ կուսակցութեան փոխնախագահ, ԱԺ նոյնանուն խմբակցութեան անդամ Ռազմիկ Զոհրաբեանը:

Մեկնաբանելով Ռ. Զոհրաբեանի յայտարարութիւնը՝ ԲՀԿ նախագահ Գագիկ Մառուկեանի մամուլի խօսնակ Խաչիկ Գալստեանը «Եր»-ին ասել է. - «ԲՀԿ-ին թուլացնելու ցանկութիւն տարբեր քաղաքական ուժեր կարող են ունենալ, սակայն ես պէտք է յիշեցնեմ, որ մէկ կուսակցութեան կամ մարմնի ցանկութեամբ չէ, որ «Բարգաւաճ Հայաստանը» կարող է հզօրանալ կամ թուլանալ: Մեր ժողովուրդն է ի վերջոյ որոշում, որ կուսակցութեան հզօրութիւնը, եւ՝ նրա վստահութեան ու հեղինակութեան աստիճանը: Նման մօտեցումը համարում եմ հնաոճ մտածելակերպի արդիւնք:

Նա նշել է, թէ ինքը կարող է փաստել, որ «Բարգաւաճ Հայաստան» այսօր վայելում է ժողովրդի լուրջ վստահութիւնն ու աջակցութիւնը:

«Եթէ մենք իսկապէս փորձէինք քայլեր ձեռնարկել ԲՀԿ-ն թուլացնելու համար, ԲՀԿ-ն իսկապէս կը թուլանար».- ՄԱԱ-ում հրաւիրուած ասուլիսում ասել է ՀՀԿ կուսակցութեան փոխնախագահ, ԱԺ նոյնանուն խմբակցութեան անդամ Ռազմիկ Զոհրաբեանը:

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԲԵՐԻ 55 ՏՈԿՈՍԸ ԴԵՍ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱԿԵՐԱՑՄԱՆԸ

Ամերիկեան Մարշալի հիմնադրամի անցկացրած հետազոտութեան համաձայն՝ թուրքերի 55 տոկոսը դէմ է անցած տարուայ Հոկտեմբերի 10-ին Յիւրիխում Հայաստանի եւ թուրքիայի արտգործնախարարների միջեւ ստորագրուած արձանագրութիւնների վաւերացմանը:

Պաշտօնական Երեւանի եւ Անկարայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատմանն ու հայ - թուրքական սահմանի բացմանը կողմ է հարցուած թուրքերի 27 տոկոսը միայն:

Transatlantic Trends անուանուած կրող այս հետազոտութիւնը անցկացուել է Յուսիսին, սակայն դրա արդիւնքները հրատարակուել են վերջերս՝ Բրիւսելում: Ըստ հետազոտութեան հեղինակների՝ հարցման արդիւնքները վկայում են, որ թուրքիայում տիրող տրամադրութիւնները տարեցտարի լուրջ փոփոխութեան են ենթարկուած:

«Թուրքական հանրութիւնը հրապարակուած է թէ՛ Միացեալ Նահանգների եւ թէ՛ Եւրամիութեան կողմից տարուող քաղաքականութիւնից: Ակնյայտ է նաեւ, որ մարդիկ աւելի մեծ ուշադրութիւն են սկսում դարձնել թուրքիայի յարաբերութիւններին արաբական պետութիւնների հետ», - նշում են

Մարշալի հիմնադրամի ներկայացուցիչները՝ իրենց պնդումն ապացուցելու համար ներկայացնելով հետեւեալ թուային տուեալները. - «Թուրքերի թիւը, որոնք ասում են, թէ միջազգային ասպարէզում նախեւառաջ հարկաւոր է համագործակցել Մերձաւոր Արեւելքի պետութիւնների հետ, կրկնապատուել է՝ հասնելով 20 տոկոսի: Իսկ Վաշինգտոնի հետ սերտորէն համագործակցելու կողմնակիցների թիւը, ըստ հարցման, այսօր ընդամենը 6 տոկոս է կազմում»:

Կտրուկ անկում է ապրում նաեւ Եւրամիութեան անդամակցելու կողմնակից թուրքերի թիւը: Հարցման մասնակիցների միայն 38 տոկոսն է կարծում, որ Եւրոպական միութեան անդամակցելը դրական գարգացումների կը հանգեցնի թուրքիայի համար:

2004 թուականին Եւրամիութեանը թուրքիայի անդամակցութեան գաղափարին կողմ էր արտայայտուել այդ երկրում անցկացուած հարցման մասնակիցների 70 տոկոսը:

Ձեկուցի հեղինակների կարծիքով՝ հետազոտութեան արդիւնքները թուրքական արտաքին քաղաքականութիւնում վերջին տարիներին տեղի ունեցած շրջադարձի վառ ապացոյցն են:

ԶԱԼԱԽՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ԱՂԲԵԶԱՆԻ ՀԵՏ ՀԱՍԱԴԱՇՆՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Զաւախքահայութեան համար անընդունելի է Աղբեջանի հետ համադաշնութիւն կազմելու վրաստանի նախագիծը: Այս մասին իր յայտարարութեան մէջ նշել է վրաստանում բնակարկուած վարացահայ վահագն Չախալեանը: Ստորեւ ներկայացնում ենք յայտարարութիւնը:

«Սոյն թուականի Յուլիսի 18-ին վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլին իր աղբեջանցի գործընկեր իլհամ Ալիևի հետ Բաթումում հանդիպման ժամանակ հանդէս եկաւ վրաց-աղբեջանական համադաշնութեան ստեղծման առաջարկով: Օգոստոսի 20-ին վրաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Նինո Կալանթաձէն վերահաստատեց նախագահի այդ առաջարկը՝ յայտարարելով, որ տեխնիկական առումով վրաստանի համաձայնութիւնն արդէն տրուած է, իսկ ինչ ձեւեր կ'ընդունի այդ նախաձեռնութիւնը կապուած է դիւանագիտական բանակցութիւններից:

«Վրացական իշխանութիւնների այս անհետեւ եւ արկածախնդիր նախագիծը յղի է լուրջ վտանգներով: Հետեւեալները վրաստանի շատ աւելի ծանր կարող են լինել, քան 2008-ի օգոստոսեան պատերազմից յետոյ կրած կորուստները: Զաւախքահայութիւնը չի կարող անտարբեր մնալ իր բնոյթով հակահայկական այս նախագիծի նկատմամբ: Զաւախքահայութեան համար այն անընդունելի է, քանի որ նման համադաշնութեան ստեղծումը անխուսափելիօրէն հանգեցնելու է վրաստանի՝ որպէս համադաշնութեան առաւել թոյլ անդամի, Աղբեջանի գերիշխանութեան տակ ընկնելուն:

Ի՞նչ դրօշ, օրհներգ ու դինանշան է ունենալու այդ համա-

դաշնութիւնը, ո՞րն է լինելու նրա պետական լեզուն, ի՞նչ սկզբունքով է կազմակերպուելու բանակային ծառայութիւնը, ահա այն հարցերից մի քանիսը, որոնք առաջանում են այս նախագիծի կապակցութեամբ իր ապագայով մտահոգ իւրաքանչիւր ջաւախքահայի մօտ:

«Վրաց-աղբեջանական համադաշնութիւնը նաեւ Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթգծի եւ Հայաստանը շրջափակող այլ ծրագրերի տրամաբանական շարունակութիւնն է: Զաւախքահայութիւնը երբեք անտարբեր չի հետեւի, թէ ինչպէս վրացական իշխանութիւնները Աղբեջանի ու թուրքիայի հետ ձեռք-ձեռքի տուած նպաստելու են Հայաստանի ու Արցախի «վզին» գցուած խեղդապարանի սեղմանը:

«Վրաստանի կառավարութիւնը պարտաւոր է հաշուի առնել այս նախագիծի նկատմամբ իրենց երկրի հայ քաղաքացիների սկզբունքային բացասական վերաբերմունքը: Գուցէ վրաց ժողովուրդը համաձայն է թուրքիայի ու Աղբեջանի կցորդը դառնալու հեռանկարին, սակայն ջաւախքահայութիւնը Անկարայի եւ Բաքուի գերիշխանութեան տակ յայտնուելու վտանգի հետ երբեւիցէ չի համակերպուելու: Եթէ, այնուամենայնիւ, վրացական իշխանութիւնները խօսքերից անցնեն գործի, ապա ջաւախքահայութիւնն, հաշուի առնելով կոտորածների եւ բռնի տեղահանութեան ենթարկուած Բաքուի, Սումգայիթի եւ Նախիջեւանի հայութեան ճակատագիրը, իրեն իրաւունք է վերապահում միջազգային նորմերի հիման վրայ, ձեռնարկել ինքնուրոյն քայլեր՝ ուղղուած իր գոյութեան անվտանգութեանը սպառնացող այս օրհասական վտանգի չէզոքացմանը»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԸ ԱՂԹԱՍԱՐԻ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ



Տեսարան մը Սուրբ Խաչ եկեղեցւոյ պատարագէն

Իսլամական կողմնորոշում ունեցող թուրքական «Ենի Շաֆաք» օրաթերթը հաղորդում է, որ Վանի մահմետականների հոգեւոր առաջնորդ Մուֆտի Նիմետուլահ Արաւշը կարմիր վարդերով է դիմաւորել Աղթամար ժամանած Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ սրբազան Աթէշեանին:

«Հիւրիէթի» փոխանցմամբ, թուրքիայի հայերի համար Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչները բացակայութիւնն անակնկալ էր: Թերթը նշում է, որ Մայր Աթոռը նախապէս համաձայնել է մասնակցել պատարագին, սակայն վերանայել է որոշումն այն բանից յետոյ, երբ համոզուել է, որ թուրքերը Սեպտեմբերի 19-ի պատարագին ընդառաջ խաչը չեն տեղադրի Սուրբ Խաչի գմբէթին: Ըստ «Հիւրիէթի», թուրքիայի մշակոյթի նախարար էրթուրուլ Գիւնէշը հաւաստիացրել է, որ «չնայած ուշացմանը, խաչն անպայման կը տեղադրուի»:

«Լոս Անջելէս Թայմսը» գրել է, թէ կիրակի օրը Արեւելեան թուրքիայում մատուցուած պատարագը վկայում է երկու իրողութիւնների մասին՝ մի կողմից, կալ թուրքերի եւ հայերի հաշտութեան գործընթացը, միւս կողմից՝ առայսօր կան խոչընդոտներ, որոնք առաջացել են գրեթէ մէկ դար առաջ տեղի ունեցած «հայոց զանգուածային սպանդից յետոյ»: Դա հազար հարիւր տարուայ պատմութիւն ունեցող Սուրբ Խաչ եկեղեցում առաջին պատարագն էր 1915-ից յետոյ, տարեթիւ, երբ «բռնութեան արիւթը գրեթէ ամբողջապէս ոչնչացրեց Մերձաւոր Արեւելքի քրիստոնէայ համայնքներից մէկը»:

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՋՉԱՍԵՔԵՆԱՆ ԵՒ ԻՐ ՍՊԱՍԱԽՈՐՆԵՐԸ

Շարունակուած էջ 2-էն

եւ հայ-ուսականը, ըստ էութեան, հայ-թուրքական փաստաթղթի հակոտնեան է: Հետեւաբար՝ ՀՀ-ի համար որպէս դրական պէտք է գնահատել կա՛մ հայ-թուրքական արձանագրութիւնները, կա՛մ հայ-ուսական ռազմական համագործակցութեան համաձայնագիրը: Իրենց փիլիսոփայութեամբ դրանք տարբեր փաստաթղթեր են, եւ տիկին Նաղդալեանն ու միւսները չեն կարող երկուսին էլ միաժամանակ ու միանշանակ դրական գնահատական տալ: Բայց դե ո՞ւմ ենք բան հասկացնում: Մարդիկ փող են աշխատում ու ձեռքի հետ

«Վաշինգթոն Փոսթը» պատարագի մասին գրում է, թէ «այն պէտք է դառնար մի շրջադարձ թուրքերի եւ հայերի յարաբերութիւնների բարելաւման ճանապարհին, բայց փոխարէնը հրահրեց նոր վէճեր, քանի որ թուրքական իշխանութիւնները հրաժարուեցին պատարագի նախօրէին խաչը տեղադրել վերանորոգուած եկեղեցու գմբէթին»: Թերթը նշում է, թէ վարչապետ Ռեջէփ Էրդողանն անցած շաբաթ ասել է, որ պատարագի արտօնումը վկայում է թուրքերի հանդուրժողականութեան մասին:

BBC-ի թղթակիցն իր ռեպորտաժում ասել է, թէ «լեռների խորապատկերում հայոց միջնադարեան պատարագի փառաւոր հնչիւնները շատ յուզիչ էին, մարդիկ եկել էին Միացեալ Նահանգներից, Յունաստանից, Գերմանիայից եւ Հայաստանից՝ տօնելու խորհրդանշական վերամիաւորումն այս երկրի եւ իրենց նախնիների հետ»: BBC-ն վկայակոչել է «Ակօսի» խմբագրապետ Ռոբերտ Կոպտաշին, ով ողջունել է թուրքերի կողմից եկեղեցին վերանորոգելու հանգամանքը եւ աւելացրել. - «Դա հրաշալի է, բայց նրանք պարտաւոր են աւելի խիզախ լինել: Թուրքիայի հասարակութեան մեծ մասը պատրաստ է ընդունել, որ դա հայկական եկեղեցի է, հիմա հերթը կառավարութեանն է»:

Թուրքական «Զամանը» գրել է, որ Աղթամարում հայկական եկեղեցու գմբէթին խաչ տեղադրելու արգելքը ճիշդ այնպիսի սխալ է, ինչպիսին թոյլ տուեց եւրոպական մի երկիր (խօսքը Շուէցարիայի մասին է)՝ արգելելով մինարեթներ կառուցել:

էլ պատգամաւորական կոճակ-մոճակ սեղմում, իսկ տառաճանաչները, բացի նշուած գործառոյթներից, նաեւ հարցադրոյց-մարցադրոյց են տալիս ու Սերժ Սարգսեանի նկատմամբ քծնանքի «սեանսներ» տալիս:

Այս ամէնը վկայում է, որ իշխանական համակարգը փտած է ոչ միայն որոշումներ ընդունելու, այլեւ այդ որոշումները քարոզելու տեսանկիւնից: Դա է պատճառը, որ նաղդալեաններն ու միւսներն անգթօրէն օգտագործուած են, երբ, իհարկէ, երթուղայինի գծերով զբաղուելուց զատ ազատ ժամանակ են ունենում:

ԼՈՒՐԵՐ

ՄԱԿ-Ի ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ »ԴԱՏԱԿԱՆ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ» ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ՝ ԿԱՆԽԵԼՈՒ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄՆԵՐԸ



ՄԱԿ-ի անկախ փորձագետները աշխատանքային խումբը, որն աւարտեց երկրում իր 11-օրեայ առաքելությունը, կոչ է արել Հայաստանին հետեւել, որ խստորէն պահպանուի երկրի դատական համակարգի անկախությունը՝ ապահովելու արդարադատության վերահսկում եւ անաչառ դատաքննությունը:

Սեպտեմբերի 6-15-ը Հայաստանում առաքելություններ գտնուող աշխատանքային խումբը, որին վստահուած էր ուսումնասիրել կամայական ձերբակալումների եւ կալանքի տակ պահելու դէպքերը, մի շարք մտահոգիչ երեւոյթներ է արձանագրել: Խմբի փորձագետները, մասնաւորապէս, նշել են ոստիկանություններ, ազգային անվտանգութեան ծառայություններ եւ իրաւապահ մարմինների՝ առանց կալանքի օրդերի ձերբակալելու եւ մարդկանց կալանքի տակ պահելու չափազանց մեծ լիազօրութիւնները:

«Մեղադրող եւ պաշտպանական կողմերի ուժի հաւասարութեան սկզբունքը արդար դատաքննություններին հիմնական նախադրեալներն են», եւ երէկ ասել է ՄԱԿ-ի կամայական ազատագրկման հարցերով դիտորդական խմբի ղեկավար Հաջի Մալիկ Սոուդը՝ ՀՀ կառավարութեանն ուղղուած յայտարարութիւնում:

«Որպէս կանոն՝ դատաւորները բաւարարում են մեղադրող

կողմի միջնորդութիւնը, մինչդեռ հազուադէպ են հաշուի առնում պաշտպանական կողմինը», - լաւեւել է նա:

Ըստ ՄԱԿ-ի լրատուական կենտրոնի կայքէջում տեղադրուած գնահատականի՝ խումբը լուրջ մտահոգութիւններ է արտայայտել ձերբակալուածների եւ կալանաւորուածների առնչութեամբ, որոնց հետ ոստիկանութիւնում անմարդկային եւ վերաբերուել կամ ծեծի են ենթարկել, ինչպէս նաեւ՝ կոտորածների ենթարկելով խոստովանութիւններ կորցել:

Աշխատանքային խումբը նաեւ յորդորել է կառավարութեանը՝ թոյլ չտալ, որ մարդիկ ձերբակալուեն եւ հետապնդուեն քաղաքական հայեցքներ համար, եւ որ յարգուի խաղաղ հանրահաւաքներ անցկացնելու նրանց իրաւունքը:

Իր յայտարարութիւնում Սոուդը զրուատել է կառավարութեանը՝ քրէական դատավարութեան օրէնսգրքում բարեփոխումներ կատարելու հետեւողական ջանքերի համար: Նա նաեւ բարձր է գնահատել քրէակատարողական հիմնարկների եւ կալանավայրերի պայմանները բարելաւելու ջանքերը:

Սակայն «որպէսզի դատական համակարգը ծառայի իր ազնիւ նպատակին, այն է՝ արդիւնաւէտ վերահսկել արդարադատութիւնը, այն պէտք է լինի անկախ եւ անկողմնակալ», - ասել է նա:

ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱՒ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Մարտնակուած էջ 1-էն

ըսած է,- «Կարծում եմ, դժուար է նշել տօն մարդկանց հետ, ովքեր իրենց իշխանավարման ամէն օրը Հայաստանին պատճառել են հական վնասներ, մարդկանց՝ ովքեր կրակ են բացել ցուցարարների վրայ, մարդկանց՝ ովքեր բանտում պատանդ են պահում քաղաքական գործիչներին, իրենց քաղաքական հայեցքների համար: Նման պարագայում այդպիսի մարդկանց հետ տօնը նշելը կը լինէր վիրաւորանք նոյն անկախութեան եւ ազատութեան արժէքներին»:

Փոխարէնը, Լեւոն Տէր-Պետրոսեան իր համակիրներուն հետ Անկախութեան տօնը նշեց Երեւանի Մարտիրոս Սարգսի արձանին յարող պուրակի մօտ:

Անկախութեան տօնին առթիւ ՄԴՀԿ կենտրոնական վարչու-

թեան անդամ Վահան Շիրխանեան «Հայնիւզ» կայքէջին ըսած է. «1991 թ-ի Սեպտեմբերի 21-ին քուէարկելով անկախութեան օգտին՝ մենք չէինք ձգտում այս իրավիճակին»:

«Իբրեւ ձեռքբերում, իհարկէ, պէտք է առանձնացնել Արցախեան ազատամարտում տարած յաղթանակը, ինչպէս նաեւ յաղթանակի ընթացքում ձեւաւորուող եւ այսօր արդէն իսկ կայացած Հայոց բանակը: Խնդիրներ, իհարկէ կան: Այս 19 տարիների ընթացքում մենք ունեցանք տնտեսութեան քայքայում, գործազրկութիւն, սոցիալական բեւեռութիւն: Այսօր մեր երկրի տնտեսական, բանկային համակարգը կախուած է միջազգային ֆինանսական կենտրոններից, որոնք եւ թելադրում են խաղի կանտները» ըսած է Հնչակեան ներկայացուցիչը:

ՅՈՎԻԿ ԱՐՐԱՅԱՍԵԱՆԻ ՎՐԻՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱԳՐԱԿԱՆ Է ԴԱՌՆՈՒՄ

Խնդիրն այն է, որ Աժ նախագահը բազմաթիւ բիզնեսներ ունի, եւ հիմա նրա բիզնեսը ուզում են բերել հարկային դաշտ:

Խնդիրն այլ է. ինչպէ՞ս եւ ինչո՞ւ է Յովիկ Աբրահամեանը չալտուել խորհրդարանում՝ Աժ նախագահի պաշտօնում: Յիշենք նրա անցած ուղին. գբաղեցրած պաշտօններից եւ ոչ մէկը նրան հնարաւորութիւն պէտք է որ չտար հարկւրաւոր միլիոն տոլարներ կուտակելու: Սակայն, փաստօրէն, իր պաշտօնները նա ծառայեցրել է միջոցներ կուտակելու նպատակով: Բնականաբար, դրանք հիմնականում պետական միջոցներ էին:

Քաղաքացեալ, մարգպետ, տարածքային կառավարման նախարար: Այդ պաշտօնեան պէտք է որ ժամանակ չունենար բիզնեսով զբաղուելու, բայց նա նախ դրանով է զբաղուել, յետոյ ընտրութիւնների ժամանակ կատարել է իր պարտքը՝ ապահովել է ձայներ թէ՛ նախկին, թէ՛ ներկայ իշխանութիւնների համար:

«Նա լաւ էր կատարում իր գործը, լաւ էր կազմակերպում», - ասում են նրա ներկայ եւ նախկին թիմակիցները: Որտեղի՞ց Յովիկ Աբրահամեանին այդքան կարողութիւն, որտեղի՞ց այդքան բնակարան Երեւանում, գործարաններ, հարկւրաւոր հեկտարներով հողեր, հանքավայրեր, տարբեր երկրներում անշարժ գոյք:

Որ դրանք նա օրինական ճանապարհով չի ձեռք բերել, բոլորին է յայտնի: Մեր ձեռքի տակ է Յովիկ Աբրահամեանի 2007-2008 թթ. գոյքի եւ եկամուտների յայտարարագիրը:

Տարածքային կառավարման նախարարի յայտարարագրի «Այլ եկամուտներ» բաժնում գրուած է, որ զիւղմթերքի իւրացումից նա ստացել է 1 մլն 200.000 ԱՄՆ տոլարի եկամուտ: Հենց այդ ժամանակ էլ նա Ծաղկաձորում մի հսկայ առանձնատուն է նուէր ստացել:

Այսօր Աժ նախագահը առանձնատուն է կառուցում Երեւանի Բաբայան փողոցին հարող այգուում: Ինչպէ՞ս է նա այստեղ 2500 քմ հողամաս ձեռք բերել, իհարկէ՞ Երեւանի քաղաքացեալի որոշմամբ: Նման փաստերը բազմաթիւ են, տասնեակ օրինակներ կարելի է բերել:

Յ. Աբրահամեանն ընդհանրապէս շատ զգուշ, զգօն ֆիզուրա է: Թէ ո՞նց է այս անգամ սխալուել, կորցրել զգօնութիւնը, անհասկանալի է: Նա թերազնահատել է իր շրջապատին եւ չի կուսակել, որ իր երազանքների մասին անկեղծ «պոռթկումը» ձայնագրութեան տեսքով կարող է յայտնուել նախագահի սեղանին:

«Ես կը դառնամ նախագահ, դու էլ՝ վարչապետ», - իր իննամուն՝ Գագիկ Ծառուկեանին ասել էր երազկոտ Աբրահամեանը: Իսկ ի՞նչ է, պէտք է զարմանա՞լ Յովիկ Աբրահամեանի արտոժակի վրայ:

Նա հասել է, չէ՞, Աժ նախագահ

չի աթոռին, ինչո՞ւ հիմա չի կարող երազել նախագահական գահի մասին: Այդպիսի ցանկութիւն Հայաստանում շատերն ունեն (մոսկուացի մի գործարար էլ ժամանակին ուզում էր համայն հայութեան նախագահը դառնալ):

Սակայն իր երազանքի մասին բարձրաձայնելը ճակատագրական է դառնում Յովիկ Աբրահամեանի համար:

Այս իրադարձութիւնների ֆոնին կարծես ժամանակն է, որ որեւէ ուժ բարձրացնի պաշտօնեաների՝ ապօրինաբար ձեռք բերած ունեցուածքն ազգայնացնելու հարցը:

Եւ ազգայնացումը պէտք է սկսել հենց Ազգային ժողովից, առաջին հերթին՝ Ազգային ժողովի նախագահից ու նրա տեղակալներից, ապա հերթով անդրադառնալ պատգամաւորներին:

Ընտրողները պէտք է իմանան, թէ ինչպէս են իրենց կարողութիւնը կուտակել օրէնսդիրները: Երբ իշխանութեան ներկայացուցիչները խօսում են կոռուպցիայի դէմ պայքարի մասին, ես միանգամից ասում եմ՝ ահա կոռուպցիայի օրինակներ, եկէք պայքարենք:

Նրանք անմիջապէս կանխում են՝ ասելով, որ կոնկրետ օրինակներից պէտք է խօսել, կոռուպցիան հասարակական շարիք է: Իսկ ես համոզուած եմ՝ կոռուպցիան միմիայն իշխանական շարիք է, կոնկրետ օրինակներ իշխանութիւններին պէտք չեն, որովհետեւ այդ օրինակներում իրենք են:

Աժ նախագահի տասնեակ տներն ու առանձնատներն արժէ ազգայնացնել եւ դարձնել, ասենք, մանկապարտէզ կամ մի քանի մասի բաժանելով՝ էժան գներով յատկացնել երիտասարդ կամ պատերազմում զոհուածների ընտանիքներին:

Հարկւրաւոր միլիոն տոլարներ ունեն նաեւ նախկին նախարարները, նրանց էլ պէտք է բերել օրէնքի դաշտ: Սկսել, օրինակ, Գրիգոր Պողոպտեանից եւ հասնել մինչեւ Կարէն ձմարիտեան, Սեպուհ Թաշձեանից՝ մինչեւ Գագիկ Մարտիրոսեան, Վարդան Այվազեան, Կառլոս Պետրոսեան, որպէսզի այսօրուայ նախարարները չիւրացնեն, ամէն երեկոյ չգբաղուեն օրուայ հասցիքը հաշուելով, վաղուայ պաշտօնեաներն իմանան, որ միեւնոյն է, յետոյ գողոնը վերադարձնելու հարց է առաջանալու:

Եւ պետութիւնից գողացած իւրաքանչիւր լուծա պէտք է ետ վերադարձնել պետական գանձարան: Շատերն ասում են, որ դա վճուկների որս է: Ոչ, դա ընդամենը լինելու է գողոնի վերադարձ եւ պատասխանատուութեան ենթարկում օրէնքի խախտման համար:

Ազգայնացման թէզը կարող է դառնալ քաղաքական որեւէ ուժի նախընտրական ծրագրի առանցքը: Եթէ, իհարկէ, գտնուի որեւէ քաղաքական ուժ, որի ձեռքերը կեղտոտ չեն:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԲԱՑԱՌԻԿ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԾՆՈՂՔ-ՁԱԲԱԿ ՓՈԽ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայ դարուս գոյացած ընտանեկան դժուարություններու, մարտահրավերներու եւ ծնողք-զաւակ փոխ-յարաբերութիւններու բարելաւման շինիչ մտահոգութեամբ Փաստինայի շրջանի Հ.Մ.Մ.ի Տիկնանց Միութեան նախաձեռնութեամբ եւ հոգեբան բժիշկ Գագիկ Մելքոնեանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը Կարօ Սողանայեան սրահէն ներս, Ուրբաթ, 10 Սեպտեմբեր, 2010 Տօքթ. Գագիկ Մելքոնեան հոգեբանական հարցերու այժմէական մօտեցումներով եւ իւրաքանչեւ հարորդակցութեամբ շահած է բազմաթիւ անհատներու համակրանքը:

Առաջին հերթին զինք բեմ հրաւիրեց Հ.Մ.Մ.ի Տիկնանց Միութեան ատենապետուհի Տիկ. Քնար Պողարեան: Ան բժիշկը ներկայացուց որպէս «Ամերիկեան Հոգեբանական Ընկերակցութեան» անդամ եւ 20 տարուայ փորձառու բժիշկ-հոգեբան:

Առաջին բաժնով յարգելի բժիշկ-



Հ.Մ.Մ.ի Տիկնանց Միութեան ատենապետուհի Քնար Պողարեան

կը անդրադարձաւ ծնողք-զաւակի մէջ տեղի ունեցող հիմնական տարակարծութիւններու մասին եւ յանձնարարեց մեր երեխաները եւ կամ զաւակները ընկալել եւ ընդունիլ որպէս անհատ եւ առանձին միաւոր, անոնց տալով կարեւորութիւն: Ան խօսեցաւ հարորդակցութեան պակասի վատ հետեւանքներու մասին, ինչպէս փախուստ դէպի փողոց, դէպի սխալ ամուսնութիւն եւ այլ ողբերգական վիճակներ: Բժիշկը նաեւ շեշտեց ընտանեկան առողջ մթնոլորտի կարեւորութեան՝ գաւակներու եւ անոնց ապագայի կերտման կենսական հարցին նկատմամբ:



Հոգեբան բժիշկ Գագիկ Մելքոնեան

Ան ցաւ յայտնեց որ ծնողներու մեծամասնութիւնը այսօր տակաւին չեն գիտեր իրենց զաւակը մտատանջող էական հարցերը՝ յատկապէս ապրուստի ապահովման եւ բարօր ապագային մասին:

Երեկոյի կարեւոր նիւթերէն հանդիսացաւ նաեւ անհատներու ապրած միջավայրն ու մշակութիւններու տարբերութիւնը եւ միջավայրէն թելադրուած հարցերու ազդեցութիւնը: Հետաքրքրական էր զիտնալ թէ յատկապէս հայ ընտանիքները բոլոր դժուարութիւններէ ետք տակաւին կը մնան ամենէն կայունը եւ ամուրը, համեմատելով այլ ժողովուրդներուն հետ եւ զայն վերագրեց մեր քրիստոնէական հաւատքին, ազգային աւանդութեանց կառչած մնալուն:

Ներկաները մեծապէս գնահատեցին այս շինիչ երեկոն: Ապա տեղի ունեցաւ հարցումներու փոխանակում:

Տօքթ. Գագիկ Մելքոնեան իր խօսքը ավարտելով թելադրեց տարակարծութիւններու ընթացքին չի վիճաբանիլ այլ՝ լսել, տրամադրելի դառնալ մեր զաւակներուն եւ հոգեբանական բանալիներ տալ անոնց:

«Պահպանէք ինքներդ ձեզ եւ բոլոր նրանց ում դու սիրում էք» յարեց ան:

Այս խիստ կարեւոր դասախօսութեան համար շնորհակալութիւն կը յայտնենք Տօքթ. Գագիկ Մելքոնեանին, որ շատ առողջ եւ անկեղծ մթնոլորտին մէջ իր լաւագոյնը փոխանցեց ներկաներուն, այժմէական գաղափարներով եւ առողջ մօտեցումներով: Անոնց որոնց կը հետաքրքրէ՝ բժիշկի հեռաձայնի թիւն է (818) 990-8098:

«ԼԱՐՔ»Ի ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԸ

ԹԱԳՈՒՀԻ ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ

Մանկութեան աշխարհը հոգեբանների եւ ոչ միայն հոգեբանների համար մեծագոյն առեղծուած է՝ անարատ ու գրաւիչ, մաքուր ու առեղծուածային երեւոյթ: Մանկութիւնը կեանքի առաւուսն է: Ե՛ի որքան չքնաղ է անամպ այգաբացը, նոյնքան հիասքանչ է մանկութիւնը:

Ի՞նչն է աւելի ջինջ մանկան լուսէ արցունքից, աւելի անուշ, քան նրա մարմնի կաթնահամր, աւելի առինքնող, քան նրա անմեղ հարցասիրութիւնը: Նրանց անհոգ աշխարհի գլխաւոր հոգսը հետաքրքրասիրութեան անդիմադրելի պահանջի գոհացումն է: Հարցերը կարող են լինել անհեթեթ, զաւեշտական, բացատրելիութեան անհնարինութեամբ: Եւ դու, որպէս մանկավարժ, պիտի անպայման համոզիչ պատասխան գտնես նրա ամենասրտառմօտ հարցերի համար:

Եւ գնահատելի են այն մանկավարժները, որոնք իրենց հոգու խորքում մանուկ են մնում՝ ջերմութեամբ, բարութեամբ, զգայուն...

Եւ ահա այս թանկագին մանուկներին դուք, սիրելի ծնողներ վստահել էք մեզ՝ «Լարք»ի ամառային ճամբարի մանկավարժներին:

Արդէն ճորձ տարին է, որ Լարքում իր գործունէութիւնն է ծաւալում Լարքի ամառային ճամբարը մշակուած ծրագրով եւ նպատակասլացութեամբ:

Հիանալի զգացում է, իւրաքանչիւր առաւօտ ժամը ծին Լարքի բակում կամ մօտակայ այգում ընդունել ժիր, կայտառ, ծիծաղկոտ, իսկ երբեմն էլ թախծոտ աչքերով մանկիկներ, որոնք օրը սկսում են մարմնամարզութեամբ՝ Նորայր Տատուրեանի ղեկավարութեամբ:

Այո, «առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» հնուց եկած այս խօսքը արդիական է բոլոր ժամանակներում: Մարմնամարզութիւնից յետոյ երեխաները նախաձաշում են պատրաստուած Լարքին

նուիրեալ, մեր բոլոր կողմից սիրուած Տիկ. Իշխանուհի Պետրոսեանի հմուտ ձեռքերով, որի պատրաստած համեղ կերակուրների մասին երեխաները յաճախ են մատնանշում իրենց ընտանիքներում:

Կոմիտասն ասել է. «Մանուկների ճիշտ դաստիարակութիւնը ամէնից սուրբ գործն է, իսկ երաժշտութեամբ շատ բան կարող ես անել»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 19-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԺԸՆԵՒԻ ՄԵՋ

Կիրակի, 19 Սեպտեմբեր 2010. Ընդառաջելով Զուգեցերիոյ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Վարչութեան ուղարկած «Հայրենիքիս հետ, Հայրենիքիս համար» կարգախօսը կրող շրջաբերական նամակին, կանուխ ժամերէն հոծ բազմութիւն մը իր տեղը գրաւած էր Ս. Յակոբ Եկեղեցւոյ նստարաններուն վրայ, Ս. Պատարագի հոգեպարար արարողութեամբ եւ «Հանրապետական մաղթանք»ի աղօթքներով նշելու համար Հայաստանի Անկախութեան 19-րդ տարեդարձը: Պատարագիչն էր գաղութիս Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Աբէլ Բհնյ. Մանուկեանը: Եկեղեցւոյ առջեւի շարքերուն հիւրաբար ներկայ էին Գերմանիոյ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Թեմի Փոխ-Առաջնորդ՝ Տ. Սերովբէ Վրդ. Իսախանեանը, ՀՀ Զուգեցերիոյ Դեսպանութեան եւ Միացեալ Ազգերու եւ Միջազգային այլ Հաստատութիւններուն մօտ՝ Ազնուակապ Տիկ. դեսպանորդ Սաթենիկ Աբգարեանը, ՀՀ դեսպանութեան նոր նշանակուած հիւպատոս՝ մեծարգոյ տիրար Արտակ Յովհաննիսեանը, պետական այլեր եւ զուգեցերիական համայնքի ազգային-մշակութային կազմակերպութեանց պատասխանատու ներկայացուցիչներ:

Հայաստանի անկախութեան տօնին ձօնուած Ս. Պատարագի արարողութեան երգեցողութիւնը եւ առանձին շարականներու մենակատարումները դարձան դասի դեկավարին ու մեներգողներուն կողմէ, ուղղակի վերացնող եւ սրբացնող ազդեցութիւն մը կը փոխանցէին ներկաներուն վրայ: Արժանաշնորհ Տէր Հօր երգած ու արտասանած աղօթքին մեկնաբանումները կարծէք այն տպաւորութիւնը կու տային, որ այս պատարագը ուրիշ շնչատարող մը ունէր, ու կը բխէր ազգին պատմական փորձին, հաւաքական գիտակցութեան եւ ապրումներու բիւրեղ ակունքէն, որուն «Հայրենասիրութիւն» անունը կը տրուի:

«Հանրապետական մաղթանք»ը սկսելէ առաջ, Արժ. Տ. Աբէլ հանդէս եկաւ հայրենասիրական կուռ քարոզով մը, մէջբերելով հետեւեալ բնաբանը, «Նաեւ զՀանրապետութիւն Հայաստան աշխարհիս զօրացուցես եւ պահպանեսցես համայն ամա՛ ի շինութիւն, ի խաղաղութիւն եւ յանասանութիւն»:



ՀՀ Արտաքին Գործերու Փոխնախարար՝ Արման Կիրակոսեան

Ան ըսաւ. «19 տարիներ անցած են, բայց դեռ մեր ականջներուն մէջ այսօրուան պէս կ'արձագանգուի զործեց, ինքնավստահ եւ քաջ քայլերով: Հանդիսութիւնը սկսաւ յոտընկայս մէկ վայրկեան յարգելով մեզմէ հեռացած վեթերան ընկ. Յարութիւն Մարաշլեանի յիշատակը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Դամասկոսի Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Տէր Արմաշ Եպս. Նալպանտեանը, Ս.Գ.Հ.Կ. վարիչ Մարմինի անդամներ, վեթերան ընկերներ, հիւրեր եւ ՀՄՄ.ականներ: Հ.Մ.Մ.-ի փողերախումբը խանդավառ մթնոլորտի տակ հնչեցուց ազգային եւ յեղափոխարող կարծէք այն տպաւորութիւնը կու տային, որ այս պատարագը ուրիշ շնչատարող մը ունէր, ու կը բխէր ազգին պատմական փորձին, հաւաքական գիտակցութեան եւ ապրումներու բիւրեղ ակունքէն, որուն «Հայրենասիրութիւն» անունը կը տրուի:



Տ. Աբել Բհնյ. Մանուկեան Բարձր պաշտօն

գանգէ հայութեան սրտէն պոռթկած բողոքի եւ միասնութեան հօգուածը: Երեւանի փողոցներով հեղեղի նման, ալիք-ալիք, խիտ-խիտ, ժողովուրդի յորձանքը կ'իջնէր դէպի Բաղրամեան փողոց ու քաղաքի կեդրոն, դէպի օփերայի հրապարակ՝ դրօշներով, բազմաթիւ ցուցատախտակներով, կարգախօսներով, անընդհատ վանկարկելով. «Հայեր, միացէք», «Ղարաբաղ», «Գործադուլ» եւ ի վերջոյ «Անկախութիւն»: Համաժողովրդական ցույցեր եւ օփերայի շէնքին առջեւ ծովածաւալ բազմութիւն: Ճակատագրական այդ օրերուն, բախտորոշ զուգահիշյութեամբ մը, մենք եւս Երեւան կը գտնուէինք: Յուզուած եւ խանդավառ էինք անսահմանօրէն՝ միախառնուած բոլորեց բարձրացուցած բազմութիւններուն, սակայն միեւնոյն ատեն մտահոգութիւնը

մեր սիրտը կը կրծէր, թէ ի՞նչ պիտի ըլլայ այս բոլորին հետեւանքը: Արդեօք մեր աշխարհագրական դիրքը նորէն ծուղակի մէջ պիտի նետէ մեր բազմաշարքար եւ արիւնաքամ դարձած ժողովուրդը. մեր գլխուն ինչ փորձանք ըսես կրնան բերել օտար պետութիւններն ու սահմանակից թշնամիները, որոնք այսպէս ախորժակին սրած կը սպասէին մեր վիժումին: Բայց այս էր հայ ժողովուրդի հաւաքական կամքն ու պատմութենէն արդար պահանջը: Ամբողջ Հայաստանով մէկ բռնկած համազգային այս շարժում, հիմնականօրէն Երեւանի մէջ տեղի ունեցած խռովայն իրադարձութիւնները, գերազանց վկայութիւնն էին հայ ժողովուրդի ազգային հաւաքական գիտակցութեան եւ այդ գիտակցութեան դրսեւորման ամենաբարձր

Մար.ք էջ 19

ԴԱՄԱՍԿՈՍԻ Ը.Մ.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ 2010 ԹՈՒԱԿԱՆԻ ԽԱՐՈՒԿԱՐԱՆԴԵԱԾ ՔԵՍԱՊԻ ՄԵՋ



Դամասկոսի ՀՄՄ.ի Սկառուտական Խորհուրդի կազմակերպութեամբ՝ այս տարի եւս, 19-էն 30 Օգոստոսին տեղի ունեցաւ տարեկան բանակումը, ՀՄՄ.ի Գարատուրանի բանակավայր Քեսապի մէջ: Բանակումին վերջին օրը, Կիրակի 29 Օգոստոս 2010-ի երեկոյեան՝ ներկայ գտնուեցանք աւանդական խորութեամբ մը տպաւորիչ հանդիսութեան: Երեկոյեան ժամը 7:30-ին, ՀՄՄ.ի սկառուտները դրօշակի արարողութենէն ետք, հանդիսատեսներու ներկայութեան, Հ.Մ.Մ.ի փողերախումբը նուազելով հանդի-

սավայր մուտք գործեց, ինքնավստահ եւ քաջ քայլերով: Հանդիսութիւնը սկսաւ յոտընկայս մէկ վայրկեան յարգելով մեզմէ հեռացած վեթերան ընկ. Յարութիւն Մարաշլեանի յիշատակը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Դամասկոսի Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Տէր Արմաշ Եպս. Նալպանտեանը, Ս.Գ.Հ.Կ. վարիչ Մարմինի անդամներ, վեթերան ընկերներ, հիւրեր եւ ՀՄՄ.ականներ: Հ.Մ.Մ.-ի փողերախումբը խանդավառ մթնոլորտի տակ հնչեցուց ազգային եւ յեղափոխարող կարծէք այն տպաւորութիւնը կու տային, որ այս պատարագը ուրիշ շնչատարող մը ունէր, ու կը բխէր ազգին պատմական փորձին, հաւաքական գիտակցութեան եւ ապրումներու բիւրեղ ակունքէն, որուն «Հայրենասիրութիւն» անունը կը տրուի:

Մար.ք էջ 17

**Ընկերային
Խրախճանք**

Կազմակերպութեամբ՝
**Ս.Գ.Հ.Կ.
ՓԱՐԱՄԱԶ
ՄԱՍՆԱԾԻՒՂԻ**


Մասնակց կը խանդավարէ՝
Վաչէ Հակոբեան
եւ իր նուագախումբը

Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2010
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
«Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

Մուտքի նուէր՝ \$25.00

Տոմսերու համար դիմել՝
ՓԻՐԱՅՐԻՆ
(626) 833-4871

ՅՈՐԵԼԻԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԱԼ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ



Ուրբաթ օրը Արամ Խաչատրեան համերգասրահում կայացաւ համերգ նուիրուած հայ լաւագոյն կոմպոզիտորներին մէկի՝ Ալեքսանդր Յարութիւնեանի ծննդեան 90-ամեակին:

Դասական երաժշտութեան երեւանեան 3-րդ միջազգային փառատօնի շրջանակներում կազմակերպուած համերգում ելոյթ ունեցան յատկապէս այս նպատակով Երեւան ժամանած միջազգային մեծ ճանաչում ունեցող երաժիշտներ Հարրի Լիդֆելդ (տուբա, Մեծ

Բրիտանիա), Ռադովան Վլադկովիչ (զալարափող, Սերբիա) Սերգէյ Նակարչակով (չեփոր, Ռուսաստան), Դայչին Կաշիմիտո (Չուժակ, Ճապոնիա), Աշլի Վոսար (դաշնամուր, Մեծ Բրիտանիա):

Համերգի առաջին բաժնում հնչեցին Ալեքսանդր Յարութիւնեանի փողային նուագարաններու համար գրած կոնցերտները: Երկրորդ բաժնում մանսորոյի պատուին հնչեցին Մոցարտի եւ Բեթհովենի ստեղծագործութիւնները:

ԵՐԵՒԱՆ Է ԺԱՄԱՆՈՒՄ ԼՈՆՏՈՆԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ



Երկօրեայ հիւրախաղերով այս շաբաթ Երեւան է ժամանում աշխարհահռչակ Լոնտոնի թագաւորական ֆիլհարմոնիկ նուագախումբը, որ հանդէս կը գայ մեր անուանի երաժիշտների՝ Յասմիկ Պապեանի եւ Բարսեղ Թումանեանի հետ:

«Մենք բոլորս սպասման մէջ ենք մի մեծ իրադարձութեան, որ Լոնտոնի թագաւորական ֆիլհարմոնիկ նուագախումբի առաջիկայ այցն է Հայաստան՝ Սեպտեմբերի 22-ին եւ 23-ին», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց «21-ի հեռանկան» դասական երաժշտութեան միջազգային 11-րդ փառատօնի գլխաւոր մենեջըն Սոնա Յովհաննիսեանը: - «Բաւականին ժամանակ բանակցութիւնների մէջ էինք նուագախումբի հետ, որովհետեւ այդ կարգի նուագախումբերը իսկապէս 4-5 տարի առաջ են պլանաւորում իրենց համերգային գործունէութիւնը»:

Յովհաննիսեանը նշեց, որ այժմ բանակցութիւններ են վարում Բեռլինի, Վիեննայի ֆիլհարմոնիկ նուագախումբերի հետ:

Առաջին համերգի ժամանակ Լոնտոնի ֆիլհարմոնիկ նուագախումբը կը ղեկավարի էդուարդ Թոփչեանը: Համերգին կը մասնակցի աշխարհահռչակ դաշնակահար Բորիս Բերեգովսկին:

Երկրորդ համերգը տեղի կ'ունենայ Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնում: Յասմիկ Պապեանն ու Բարսեղ Թումանեանը, Լոնտոնի ֆիլհարմոնիկ նուագակցութեամբ կը կատարեն արիաներ հանրայայտ օպերաներից:

«Նախադէպը չունեցող, բացառիկ իրադարձութիւն է: Ընդհանրապէս այդ կարգի նուագախումբ Հայաստանում չի եղել: Քլիվլենդի նուագախումբի այցից յետոյ՝ (անցած դարի) 60-ական թուականներին», - ասաց Թոփչեանը:

ՀԱՅ ԼՈՒՄԱՆԿԱՐԻՉԸ ՅԱՂԹԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵՂԻՆԱԿԱՒՈՐ ՖՈՏՈՍՐՑՈՅԹՈՒՄ



Լուսանկրիչ Աշոտ Պողոսեանի «Երազանքի ըոպէ» լուսանկարը Սեպտեմբերի 21-ին յաղթող է ճանաչուել Չեխիայում անցկացուած «Խաղաղութեան պահեր» միջազգային ֆոտոմրցոյթի «Մարդիկ» անուանակարգում: Մրցոյթն անց է կացրել Տեղեկատուական խաղաղութեան միջազգային կենտրոնը՝ Խաղաղութեան միջազգային օրուայ առթիւ: Ընդհանուր առմամբ ֆոտոմրցոյթի «Մարդիկ» անուանակարգում յաղթելու յաւակնութիւն ունէր 2594 լուսանկար աշ-

խարհի 34 երկրներից: Յիշեցնենք, որ 1982 թուականին ՄԱԿ-ի որոշմամբ Սեպտեմբերի 21-ը հռչակել էր որպէս Խաղաղութեան միջազգային օր: Աշոտ Պողոսեանը (ծնած է 1989թ.) սկսել է լուսանկարել պատանեկութեան տարիներից եւ մասնակցել է մի շարք հեղինակաւոր միջազգային լուսանկարչական մրցոյթների, որոնց թւում են World Press Photo-ն եւ World photo view-ն: Տեղեկատուութիւնը տրամադրել է լուսանկարիչ Ռուբէն Բաղդիշեանը:

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎԱՍԱԿՆԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ


Հմայրապետ
ԽՐԱԽՈՒՆԵՐ
ու
ՉՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԾԻՒՂԻ


Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2010
 երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
 1060 North Allen Avenue
 Pasadena, CA 91104


 Տոմսերու համար դիմել՝
(626) 797-7680

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայրափոխարկիչ բուժում:
 Փոխադրում, վզի, մէջքի, յոզային և մկանային ցաւեր:
 Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

EVERYDAY LOW PRICES!

	GREY GOOSE VODKA ALL FLAVORS 21⁹⁹		JACK DANIEELS OLD NO. 7 WHISKEY 13⁹⁹		HENNESSY VS COGNAC 21⁹⁹		PATRON SILVER TEQUILA 29⁹⁹
	CHIVAS REGAL 12 YEARS SCOTCH WHISKY 16⁹⁹		CAZADORES REPOSADO TEQUILA 19⁹⁹		RUSSIAN STANDARD PLATINUM VODKA 18⁹⁹		SKYY VODKA 8⁹⁹
	TITO'S HANDMADE VODKA 17⁹⁹		COURVOISIER VS COGNAC 16⁹⁹		SAUZA TEQUILA GOLD OR SILVER 8⁹⁹		DEWAR'S 12 YEARS SCOTCH WHISKY 14⁹⁹

- 1785 E. Washington Blvd. (corner of Allen) Pasadena, CA 91104 • (626) 794-7026
- 825 W. Glenoaks Blvd. (corner of Highland) Glendale, CA 91202 • (818) 242-0683

*This ad expires on 09/29/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

COMING SOON!

Sherman Oaks

- 13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401 • (818) 785-6529



MISSION Wine & Spirits

ԴԱԻԹ ԱՆՅԱՂԹ

(Ծնդեան եւ Մահուան բուական-նեքը անյայտ) Ե.-է. դարերի հայ փիլիսոփայ

Նէոպլատոնականութեան հետեւորդ: Հին հայկական փիլիսոփայութեան աշխարհիկ ուղղութեան հիմնադիր, յունաբան դպրոցի գլխաւոր գործիչներից:

Դաւիթ Անյաղթի մասին պահանջներ են շատ քիչ տեղեկութիւններ: Ըստ հին հայկական աղբիւրների նա ծնունդ է Տարօն գաւառի Ներգին գիւղում: Այդ պատճառով էլ նա ձեռագրերում յաճախ յիշատակում է, որպէս Դաւիթ Ներգինցի:

Ըստ հետազոտութիւնների, Դաւիթ Անյաղթը ծնունդ է 5-րդ դարի 70-ական թուականներին, եւ մահացել է 6-րդ դարի կէսերին:

Երիտասարդ տարիներին Դաւիթ Անյաղթը մեկնում է Յունաստան՝ ուսման:

Ստոյգ ճշտուած է, որ Անյաղթը Յունաստանում աշակերտում է Օլիպիոզորոս Կրտսերին, որը 5-րդ դարի վերջերին եւ 6-րդ դարի սկզբներին դեկավարում էր Ալեքսանդրիայի փիլիսոփայական դպրոցը:

Վերադառնալով Հայաստան ծաւալել է գիտական եւ մանկավարժական գործունէութիւն: Մեծ հռչակ է վայելել նաեւ յունական աշխարհում: «Անյաղթ փիլիսոփայի» փառքը նա ձեռք է բերում իր գիտելիքների եւ ամէնից առաջ բանավիճական ձիթքերի համար: Արեւմտեան գրականութեան մէջ Դաւիթ Անյաղթը յայտնի է նաեւ «Դաւիթ Արմենիոս»՝ Դաւիթ Հայ, անունով:

Դաւիթ Անյաղթի ստեղծագործութիւնը

Տեքստերի համեմատական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Դաւիթ Անյաղթը իր աշխատութիւնները սկզբում գրել է յունարէն լեզուով: Դաւիթ Անյաղթը նպաստել է հայ փիլիսոփայութեան կազմաւորմանը, վճռական դեր խաղացել փիլիսոփայութեան ճշգրիտ տերմինաբանութեան եւ գիտակարգերի մշակման բնագաւառում:

Դաւիթ Անյաղթին վերագրուող բազմաթիւ երկերից անկասկած նրան է պատկանում չորս աշխատութիւն «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի», «Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի» եւ «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի», ընդ որում, առաջին երեքը պահպանուել են նաեւ յունարէն:

Որպէս նորպլատոնական, Դաւիթ Անյաղթը իտէլիստական հիմքի վրայ գուգակցել է Պլատոնի, Արիստոտէլի եւ Պիթագորասի ուսմունքները: Աստուած, ըստ Դաւիթ Անյաղթի, բոլոր լինելիութեան սի-

եզերաբանական ապացուցման սկզբունքը, համարելով, որ միայն բնութիւնը ճանաչելով է հնարաւոր ճանաչել արարչին: Դաւիթ Անյաղթի իմացութեան տեսութիւնը մօտ է Արիստոտէլի իմացաբանութեանը եւ ընդունել է նրա որոշ մատերիալիստական գծեր:

Աշխարհը Դաւիթ Անյաղթի կարծիքով լիովին ճանաչելի է: Մարդու հինգ զգայարանները եւ բանականութիւնը հնարաւորութիւն են տալիս գննելու եւ ճանաչելու ողջ բնութիւնը:

Դաւիթ Անյաղթը փիլիսոփայութիւնը բաժանում է երկու մասի՝ տեսական եւ գործնական: Առաջին հիմքը հոգու ճանաչողական յատկութիւնն է, իսկ նպատակը՝ մարդու գիտակցութիւնից անկախ գոյութիւն ունեցող աշխարհի ճանաչումը:

Երկրորդի հիմքը հոգու այլ յատկութիւններն են՝ արիութիւնը, ողջախոսութիւնը, արդարութիւնը: Նրա նպատակն է բարոյական արատներից ձերբազատել մարդկային հասարակութիւնը, իւրաքանչիւր անհատի ցոյց տալ առաքինութեան ուղին:

Արիստոտէլի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու եւ անտիկ այլ մտածողների երկերի թարգմանութիւններով հանդերձ Դաւիթ Անյաղթի ժառանգութիւնը որոշիչ դեր խաղաց միջնադարեան հայ փիլիսոփայութեան կազմաւորման գործում: Դաւիթ Անյաղթի երկերը ազդեցութիւն են ունեցել միջնադարեան հայ փիլիսոփայութեան զարգացման վրայ, շուրջ մէկ հարյուրամեակ եղել բազմաթիւ մեկնողական աշխատութիւնների առարկայ եւ անտիկ դասական փիլիսոփայական երկերի հետ մտել միջնադարեան Հայաստանի բարձրագոյն դպրոցների ծրագրերի մէջ:

XVIII դ. նրա երկերը թարգմանուել են վրացերէն եւ շօշափելի դեր խաղացել նաեւ վրացական փիլիսոփայութեան մտքի զարգացման գործում:

Դաւիթ Անյաղթի եկեղեցական գործունէութիւնը

Ըստ աւանդութեան, Դաւիթ Անյաղթը բազմաթիւ երգեր է յօրինել եկեղեցու համար: «Սահմանք իմաստասիրութեան» մէջ կան երգ-երաժշտութեանը վերաբերող, թէեւ ոչ ծաւալուն, բայց նշանակալից ասոյթներ, որոնք առիթ են տուել գանազան մեկնութիւնների եւ, այդպիսով, խթանել ազգային երաժշտագիտութեան զարգացմանը: Տեսութեան մէջ Դաւիթ Անյաղթը ձայների յարաբերութիւնները հանգեցնելով քանակային յարաբերութիւնների հիմնաւորել է քանակի կատեգորիայի խաղացած վճռական դերը երաժշտութեան մէջ, որով եւ վերջինս կապուած է թուաբանութեան, երկ-



րաչափութեան եւ աստղաբաշխութեան հետ: Դաւիթ Անյաղթը հայ միջավայրում ընդունելի է դարձրել երաժշտութեան տեսութեան ուսուցումը բարձրագոյն կրթական ծրագրերով նախատեսելու գաղափարը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----



ԿԻՐԱԿԻ, 31 ԲՈԿՏԵՄԲԵՐ 2010

11-րդ տարեկան Telethon «Քաջ Նազար»ի գլխաւորութեամբ: Նուիրուած «Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ երեխաների Սր. Ծնունդի և դպրոցաշինական ֆոնդին» 380 AMGA կայանով

818-239-6880, 818-606-2070, 818-246-0125

www.fourourkids99@gmail.com. **ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԶԽԱԶԱԶԵԻԷԼ:**

ԶԱՐՄԱՆԱՅԻՆ ՎԱՐՈՒՆԳՐ

Վարուճակի բուժիչ յատկությունները

Վարուճակը եւ բոլորին են յայտնի: Այն բժշկութեան մէջ օգտագործուել է դեռեւս Հիպոկրատի ժամանակներից:

Այս բուժիչ բանջարեղէնը օգտակար է սրտային, անոթային, երիկամային հիւանդութիւնների դէպքում, որովհետեւ պարունակում է կրածնային աղեր, որոնք նպաստում են օրգանիզմից աղերի եւ ջրերի վերացմանը:

Իհարկէ, ունի նաեւ հակացուցումներ. ստամոքսի խոցի ստացման ժամանակ, 12-մատնեայ աղիի, սուր եւ քրոնիկ բարակ աղիների բորբոքման (էնտերիտ) եւ հաստ աղիի բորբոքման (կոլիտ) դէպքում վարունգը պէտք է սահմանափակել կամ ընդհանրապէս բացառել սննդակարգից: Թթու դրած կամ աղի վարունգ չի թուլատրուում սուր հեպատիտի, խոլեցիստիտի, լեղաքարային հիւանդութիւնների դէպքում:

Ցանկալի է նաեւ այն օգտագործել հիպերտոնիայի եւ արթնոսկրերի դէպքում: Բացառել օրգանիզմից քրոնիկ նեֆրիտի դէպքում:

Դեղատոմսեր վարունգով

Վարունգի աղաջուրը դանդաղ ներգործող ազդեցութիւն ունի աչտուցի դէպքում: Յատկապէս խորհուրդ է տրուում որովայնախոռոչի մէջ կուտակուած հեղուկի դէպքում: Խմել 1-2 բաժակ ամէն օր (անկախ ուտելուց)՝ մինչեւ վիճակի կարգավորումը:

Քրոնիկ հեպատիտի դէպքում՝ օգտագործում են վարունգի հասած պտուղների եփուկը եւ արմատները, որոնք պատրաստում են հետեւեալ ձեւով. 20 գրամ չոր մանրացրած հումքի վրայ 1 բաժակ ջուր լցնել, եփել 20 րոպէ, քամել եւ վերականգնել ծաւալը՝ եռջուր աւելացնելով: Ընդունել կենսական բաժակ՝ օրը 3 անգամ:

Հագի դէպքում. 100 մլ հիւթի մէջ աւելացնել 2 ճաշի գդալ սխտորի եւ մեղրի խառնուրդ (հաւասար քանակութեան), լաւ խառնել, թրմել 1 ժամ:

Ընդունել 2-ական ճաշի գդալ, օրը 2 անգամ՝ սնունդ ընդունելուց առաջ: Վարունգն օգտակար է գիրանալու դէպքում. շաքարախառն մէջ մէկ անգամ կազմակերպել «վարունգի» օր՝ ամբողջ օրուայ ընթացքում ուտելով 2 կգ վարունգ: Գերազանցի է կազմակերպել հանգստեան օրը, որպէսզի սահմանափակուի օրգանիզմի ֆիզիքական ծանրաբեռնուածութիւնը:

Սթրեսի դէպքում. վարունգի կեղեւի վրայ սառը ջուր լցնել եւ 2 ժամ անց թրմել: Լուանալ այդ ջրով դէմքն ու ձեռքերը (մինչեւ արմուկները):

Արգանդային եւ թուլթային արիւնահոսութեան դէպքում. վերցնել վարունգի շիւերը (աշնանը հաւաքած): Լուանալ սառը ջրով եւ մանր կտրատել: 100 գրամ հումքի վրայ լցնել 0,5 լ ջուր, եփել մարմանդ կրակի վրայ 15-20 րոպէ, թրմել 1 ժամ: Ընդունել կէսական բաժակ, օրը 3 անգամ: Այս պատրաստուկը դանդաղեցնում է արիւնահոսութիւնը, վիճակը լաւացնում է: Ցանկալի է ընթացքում անկողնային ռեժիմ պահպանել:

Դէմքի մաշկը փափուկ եւ թարմ պահելու համար. մանր կտրատած վարունգը լցնել տարալի մէջ, աւելացնել 40%-անոց օղի, 2 շաքար պահել արեւի տակ: Քամել: Օգտագործել դէմքի մաշկը մերսելու համար:

Փորկապտութեան դէպքում. 100 մլ վարունգն աղաբեռնուած ընդունել աւելացրած մէջը 2 ճաշի գդալ արեւածաղկի ձէթ եւ 1 թէյի գդալ մեղր: Այս միջոցը խմել միանգամից: Եթէ չօգնեց, յաջորդ օրը բուժական գործողութիւնները կրկնել:

Երիկամների քարերի դէպքում. վարունգի սերմերին աւելացնել եռջուր, թրմել եւ խմել որպէս թէյ:

Վարունգով դիմակ. 1 հատ թարմ վարունգը քերիչով անցկացնել, լցնել թանգիֆի վրայ եւ 15 րոպէ դնել դէմքին, 15 րոպէից լուացուել: Մաշկը դառնում է թարմ եւ առաձգական:

Նիւթափոխանակութեան կարգաւորման համար ամէն օր առանց աղի՝ կլեպով թարմ վարունգ կերէք:

Մաշկի մաքրման համար. քերիչով (խոշոր հատուածով) անցկացրէք 100 գրամ թարմ վարունգը, վրան լցրէք 100 մլ ցանկացած լոսյոն, պահէք 8-10 օր՝ մութ եւ հով տեղում: Այնուհետեւ քամէք թանգիֆով եւ պահէք սառնարանում (պիտանի է օգտագործման համար 6 ամիս, ոչ աւելի): Ճարպոտ մաշկի ժամանակ լուացուելու փոխարէն դրանով մաքրէք մաշկը: (Եթէ մաշկը չոր է, ապա վարունգահիւթը խառնէք ցանկացած սնուցող քսուքի հետ):

Սրտանոթային հիւանդութիւնների, ինչպէս նաեւ միզապարկի բորբոքման դէպքում, օրական ուտել 1-3 հատ վարունգ, լաւ միզամուղ է:

Վահանաձեւ գեղձի պրոբլեմների դէպքում. վարունգը հեշտ իւրացուող յոդ է պարունակում, այնպէս որ, օրուայ սննդակարգում մշտապէս օգտագործէք այն:

Վերին շնչառական ուղիների հիւանդութիւնների դէպքում. ամէն օր խմել (3:1 շաքարեղակցութեամբ) վարունգահիւթը՝ խառնած բնական մեղրի հետ: Դրական արդիւնքը գագննել կը տայ:

ԴԱՄԱՍԿՈՍԻ Ը.Մ.Ս. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐԸՈՒՐԴ

Շարունակուած էջ 13-էն

կան երգերու շարք մը՝ «Հեռաւոր Երկիր», «Հնչակեան Ենք Մենք», «Հայկական Բանակ» եւ այլն: Բացման խօսքը կատարեց ընկ. Անի Քոճաքէհէան: Ան ըսաւ. «Ահաւասիկ 89 տարիներ անցան ՀՄՄ-ի կեանքէն եւ նոր սպասումներով եւ ակնկալիքներով կը պատրաստուինք դիմաւորելու 90-ամեակը, յուսալով որ այս տարին պիտի ըլլայ առաւել յաջողութեան եւ խաղաղութեան տարի մը, որպէսզի նոր թափով եւ աւիւնով, յաջողութեամբ յառաջանանք դէպի 90-ամեակ, մեր նոր մատղաշ սերունդի հոգիներուն մէջ սերմանելով հայրենասիրութեան եւ ազգասիրութեան առաքինութիւնները»:

Ապա կատարուեցաւ 10 գայ-



լիկներու օծումը, որոնք իրենց երգման արարողութիւնը կատարելէ ետք, ստացան իրենց նոր փողկապները եւ նոր աստիճանները:

Խորոյզը բռնկեցնելու արարողութիւնը միասնաբար կատարեցին՝ Սրբազան Հայրը, ՀՄՄ-ի ատենապետ՝ ընկ. Դաւիթ Խաչիւնը, եւ բանակավայրի ամէնափոքր արծուիկ՝ Իգապէլ Տէր Վարդանեանը: Մինչ սկսուածները կ'երգէին «Ճարճատու է Կրակը» երգը, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիրը:

Հ.Մ.Ս-ի սկսուածները կազմեցին շատ գեղեցիկ բուրգեր, հայկական միասնականութիւնը խորհրդանշող ամրոցներ՝ որպէսզի ոչ ոք չհաջողի քանդել հայ ժողովուրդի միասնականութիւնը: Փոքր գայլիկներէն Արարատ Գոճաքէհէան արտասանեց՝ Հրաչեայ Յովհաննիսեանի «Ծիրանի Ծառ»-ը: Սկսուածները բազմաթիւ երգերով եւ կանչերով, խանդավառեցին մթնոլորտը: Ապա արական կատակ պար մը ներկայացուցին երէց սկսուածները՝ գեղեցիկ եւ հաճելի տրամադրութիւն պարգեւելով ներկաներուն: Խումբը մը սկսուածներ ներկայացուցին կատակերգութիւն մը: Սեւան Մարաշլեան արտասանեց Սիլվա Կապուտիկեանի «Խօսք Իմ Որդուն» բանաստեղծութիւնը: Արա Գէորգեանի «Ով Հայոց Աշխարհ» հայկական պարը կատարեցին չորս պարմանուհիներ:

ՀՄՄ-ի կեդրոնական վարչութեան խօսքը արտասանեց ընկ. Վազգէն Համալեանը: Ան ըսաւ. «Կը շնորհակտուենք ՀՄՄ-ական ընտանիքները որ այսքան քաղցր մանուկներ ունին: Տարբ օրէ ի վեր այս բանակավայրին մէջ անոնք սորվեցան դրօշակի կարեւորութիւնը, զայն պահելով եւ պահպանելով, որովհետեւ ան կը ներկա-

յացնէ մեր ինքնութիւնը, մեր արժանապատուութիւնն ու պատիւը, իսկ վերջին օրը խարոյզի կարեւորութիւնը: «Եթէ ՀՄՄ-ը կրցած է իր ազգային դիմագիծը եւ պարտականութիւնը կատարել, ըսել է որ ՀՄՄ-ը հաստատ քայլերով պիտի տօնէ իր հարիւր ամեակը: Մենք որպէս ընտանիքներ դպրոց կը դրկենք ուսման, եկեղեցի կը դրկենք մեր գաւակները կրօնագիտութեան, իսկ ակումբը պիտի շարունակէ իր պարտականութիւնը կատարել, դաստիարակելով այս խումբը՝ ազգին եւ կուսակցութեան համար, շնորհալի անդամներ եւ ղեկավարներ մէջտեղ բերելով: Ուրեմն պէտք է երախտագիտութեամբ ընդունինք, եւ իմաստաւորուած ձեւով ապրինք, քանի որ կը վայելենք

հովանաւորութիւնը՝ Սուրբոյ ազատատենչ կառավարութեան եւ Վսեմաշուք իմաստուն Նախագահին՝ Բժշ. Պաշտար Ասատին: Ապրինք իրարու օգնելով, բարձրացնելով գիրար»:

Բեմ բարձրացաւ թեմիս բարեջան Առաջնորդ՝ Տէր Արմաշ Եպս. Նալպանտեանը՝ իր սրտի խօսքը յայտնելու: Ան ըսաւ. «Սիրելի ՀՄՄ-ականներ, յարգելի ծնողներ, այսօր հպարտութեամբ ներկայ գտնուեցանք գեղեցիկ, իմաստալից, կազմակերպուած հանդէսի մը, որտեղ սկսուածներ իրենց ձիրքերը ցոյց տուին մեզի ... «Մենք պէտք է պահենք մեր ինքնութիւնը, միայն այն ատեն մենք կապի մէջ կ'ըլլանք մեր Հայրենիքին եւ մեր Նախահայրերուն հետ: Մեր ինքնութիւնը պահելը նաեւ կարեւոր է Սուրբոյ համար, մենք կրցանք հիմնել մեր դպրոցները, եկեղեցիները, սկսումները: Սուրբան կը նմանի գեղեցիկ ծաղկեփունջի մը, որտեղ կ'ապրին տարբեր տեսակի ազգեր, ամէն մէկը իր բուրմունքը ունի: Մենք պիտի ըլլանք այն գեղեցիկ եւ բուրմունաւէտ վարդը, զոր կը ներկայացնենք մեր ուրոյն ձեւով: Ամէն մէկ աշխատանք ինքնին հայրենասիրութիւն է Սուրբոյ հայրենիքին հանդէպ: Սուրբան արդար է իր ընթացքով: Մեր ներդրումը այս հայրենիքին մեր ինքնութիւնը պահելն է: Մենք գիտենք ապրիլ, աշխատիլ...

«Կեցցէ՛ ՀՄՄ-ը իր աշխատանքով»:

Ապա Սրբազան Հայրը օրհնեց սեղաններու վրայ դրուած ճաշը: Ներկաները խանդավառուած ընդհանուր մթնոլորտէն՝ կատարեցին սրտաբուխ նուիրատուութիւններ: Այս առիթով շնորհակալիք եւ երախտագիտութիւն՝ քնասպիցի այն ընտանիքներուն որոնք բանակումի ընթացքին նիւթապէս եւ բարոյապէս սատարեցին բանակումի յաջողութեան:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՇԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

«ՄԵՐՏԻՆԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շարունակուած էջ 8-էն

ցին առաքելութիւնը՝ հայ մանուկը «հայ» պահելու եւ հայութեան համար նուիրեալներ պատրաստելու ծիրէն ներս: Ապա ներկայացուց վարժարանի ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան իւրաքանչիւր անդամը, մատնանշեց ամառնային արձակուրդի ընթացքին դպրոցէն ներս կատարուած բարենորոգումներն ու փոփոխութիւնները եւ խրախուսեց բոլոր ներկաները հաճոցքով սորվելու, անխոնջ աշխատելու՝ յաջող տարի մը կարենալ բոլորելու համար:

Վեր. Ճօ Մաթոսեան կարդաց Ս. Գիրքէն քանի մը համարներ, իր խրատներով քաջալերեց աշակերտները, ապա օրհնութեան աղօթքով եւ տէրունական աղօթքի երգեցողութեամբ վերջ գտաւ հանդիսու-

թիւնը եւ աշակերտները ուղղուեցան իրենց դասարանները:

Բարի երթ ուսումնական նոր տարեշրջան մը սկսող բոլոր աշակերտներուն:

Նոյն օրը, առաւօտեան ժամը 9:30ին տեղի ունեցաւ «Մերտինեան» վարժարանի նախամանկապարտէզին վերամուտը: Ոմանք՝ արցունքոտ աչքերով, կառչած իրենց մայրերու ձեռքերուն, ուրիշներ՝ արդէն միջավայրին ծանօթ, ուրախ դէմքերով հաւաքուեցան վարժարանի սրահին մէջ, ուր յաջորդաբար ելոյթ ունեցան վարժարանի տնօրէնն ու նախամանկապարտէզի տնօրէնուհին՝ Մակի Թօփալեանը:

Ապա աշակերտ ու ծնողք այցելեցին իրենց դասարանները եւ մեկնեցան տուն:

(Թղթակցութիւնը վարժարանէն)

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄՅ ՍԿԻԶԸ

Թ.Ս.Ս. ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆՈՒՄ

Շարունակուած էջ 8-էն

կան տարուայ բացման արարողութեանը իրենց սաներին ողջունի խօսք ուղղեցին տնօրէնութիւնը, հոգաբարձական կազմը եւ Հոգեշնորհ Տէր Տաճատ Մայրագոյն Վարդապետ Եարտըմեանը:

Բացման խօսքով հանդէս եկաւ հոգաբարձական կազմի անդամ փրոֆ. Օշին Քէշիշեանը՝ ողջունելով ծնողներին եւ շեշտելով վարժարանի բազմամեայ փորձն ու աւանդը իր սաներին կրթելու գործում: Իր խօսքով հանդէս եկաւ Արշակ Տիգրանեան վարժարանի հոգաբարձական կազմի ատենապետ պրն. Ճորճ Մանտոսեանը: Նա խօսեց վարժարանի կարգապահութեան մասին եւ հոգաբարձական եւ ուսուցչական կազմի պատրաստակամութեան մասին, որոնք մեծ ուրախութեամբ եւ խանդաղատանքով ընդունում են նոր սաներին: Ինչպէս գիտենք, Սեպտեմբերի մէկը Հայաստանի Հանրապետութիւնը պետականօրէն ընդունել եւ ճանաչել է որպէս գիտե-

լիքի օր: Պատահական չէ, որ վարժարանի տնօրէն պրն. Վարդգէս Գուրուեանը իր խօսքում շեշտեց գիտելիքի կարեւորութիւնը վարժարանի սաների կեանքում եւ ողջունեց նրանց մուտքը նոր ուսումնական տարի: Տնօրէնը շեշտը դրեց կրթական ծրագրերի բարեփոխումների եւ արդիական դասագրքերի ներմուծման վրայ: Նա շեշտեց, որ այս տարին լեցուն է լինելու վարժարանի երեսունամեայ գործունէութեանը նուիրուած գեղարուեստական ձեռնարկներով: Իր փակման աղօթքից առաջ Սբ. Յովհաննու Կարապետ եկեղեցու հովիւ տէր Մանուկ աւագ քահանայ Մարգարեանը խորհուրդ տուեց աշակերտներին, որ գիտութեան լոյսի կողքին հաղորդուեն նաեւ Հայաստանեայց առաքելական եկեղեցու բարոյական բարձր սկզբունքներով:

Վարժարանի տնօրէնը եւ ուսուցիչները բարիգալուստ են ասում իրենց սաներին, որոնց առջեւ դեռ նոր պէտք է բացուեն գիտելիքների աշխարհի խորհրդաւոր դռները:

ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆԸ ՎԱՐԿԱԴՐՈՒՄԸ

Շարունակուած էջ 8-էն

Հիմնուելով այցելու յանձնախումբի տեղեկագիրին վրայ՝ WASC-ը կը շնորհաւորէ եւ կը գնահատէ վարժարանի եռամեայ հետեւողական եւ աշխուրջ աշխատանքը, ամբողջացնելու համար Քալիֆորնիոյ կրթական համակարգի համապատասխան կրթական ծրագրի պայմանները, եւ մաս կազմելու WASC-ի կողմէ վարկաւորուած վարժարաններու ցանցին, միաժամանակ վարժարանը հասցնելով նահանգին կրթական մակարդակի պահանջուած չափանիշներուն:

Նաեւ, WASC-ը կը քաջալերէ վարժարանի անձնակազմը՝ շարունակելու աշխատանքը նոյն թափով, հետեւելով տեղական կրթա-

կան մակարդակի յառաջխաղացքին, ժամանակին հետ քայլ պահելու իմաստով:

Վարժարանի տնօրէնութիւնը կը շնորհաւորէ վարժարանի ծնողները, աշակերտութիւնը, պաշտօնէութիւնը, ուսուցչական կազմը եւ բոլոր յանձնախումբերը եւ իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ բոլորին, իրենց բերած ներդրումին համար, քաջ գիտակցելով, որ ձեռք ձգուած յաջողութիւնը արդիւնքն էր հետեւողական համերաշխ եւ անհաշարխնդիր աշխատանքին, որուն մէջ իւրաքանչիւր անհատ թէ յանձնախումբ, իր կարելին չզլացաւ՝ ի շահ վարժարանի վերելքին:

Բոլորին վարձքը կատար:

(Թղթակցութիւնը վարժարանէն)

Ա. ԵՒ Ս. ՅՈՎԱՏՓԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շարունակուած էջ 8-էն

դադարէ մը ետք, իր դաստիարակելու առաքելութիւնը պիտի շարունակէ:

Յովսէփեանի մեծ ընտանիքին անդամները Գալուստեան-Տունայեանց սրահէն ներս համախմբուած, հետեւեցան 2010-2011 ուսումնական տարեշրջանի բացման յայտագրին: Տնօրէն՝ Պրն. Շահէ Մանկրեան բացումը կատարեց, բարի գալստեան խօսքեր րսելով նոր եւ հին աշակերտներուն ու իրենց ծնողներուն, ու ապա ներկայացուց ուսուցչական կազմի նոր ուսուցիչ-ուսուցչուհիները:

Ապա եկեղեցուց հովիւ՝ Տ. Սարգիս Քհնյ. Փեթոյեան ողջունեց ներկաները, օրհնեց աշակերտները եւ հրաւիրեց գիրքն ք միասնաբար աղօթելու Տէրունական աղօթքը, եւ մաղթեց, որ ամենակարող Աստուծոյ շնորհքով ու կամքով կարելի ըլլայ յաջողութիւններով լեցուն

տարեշրջան մը ամբողջացնել:

Հոգաբարձութեան ատենապետ՝ Պրն. Յարութիւն Հիլալեան, իր կարգին խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որ իրենց զաւակներուն դաստիարակութիւնը վստահած են մեր վարժարանին տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, վստահեցնելով թէ՛ աշակերտներուն թէ՛ ծնողներուն, որ ամէն ճիգ ի գործ պիտի դրուի բարձր մակարդակի ուսում ջամբելու համար վարժարանէն ներս: Ան նաեւ գնահատեց հայկական վարժարանի հանդէպ ծնողներուն ցուցաբերած յարգանքն ու հաւատքը, որ կարեւոր երաշխիքներն են մէկն է հայապահպանման սուրբ աշխատանքին:

Յաջող ուսումնական տարի մը կը մաղթենք մեր սիրելի աշակերտներուն:

Թղթակցութիւնը վարժարանէն Լուսանկարը՝ Իվէթ Մանկրեանին

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

City of Glendale Water & Power GWP Your Trusted Community Utility Կլեմտէյլ քաղաքի «Ջուրի եւ Եկեկտրակա-նութեան» բաժանմունքը կ'այժմէականացնէ իր ջուրի եւ Եկեկտրակա-նութեան բաշխումի դրութիւնը կը պատրաստուի բարեփոխել քաղաքի բոլոր Եկեկտրակա-նութեան եւ ջուրի ժամացոյց-ները գանձնով վերափոխելով «Սմարթ Միթրըզ»ի: «Սմարթ Միթրըզ»ի միջոցաւ յաճախորդներուն կարելի պիտի դառնայ իրենց առօրեայ գործածութեան տեղեկութիւններուն հասանելի դառնալ, որ նաեւ միծապէս պիտի նպաստէ Եկեկտրակա-նութեան, ջուրի եւ լուսայի խնայողութեան: Բոլոր հետաքրքրուող քաղաքացիներէն կը խնդրենք մեր կայքէջէն հանրային հանդիպման մը, որ տեղի պիտի ունենայ Սբ. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցույ ներքին սրահը, Սեպտեմբեր 29, 2010, երեկոյեան ժամը 7:00էն 8:00: Եկէ՛ք աւելի լաւ տեղեկ ըլլալու «Սմարթ Միթրըզ» տեղադրումի ծրագրին: «Սմարթ Կրիտ» քայլի եւ անոր դրական ներդրումին՝ ջուրի եւ Եկեկտրակա-նութեան գործածութեան բարելաւման մէջ: Յաւելեալ տեղեկութիւններու համար (հայերէնով) հանցե՛ք հեռա-ձայնել (818) 548-4828 թիւին: Անոնք որոնք կարելիութիւնը չունին սոյն հանդիպման ներկայ գտնուելու, յաւելեալ հանդիպում մը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Սեպտեմբեր 30, 2010, «California National Guard Building, 220 East Colorado Street երեկոյեան ժամը 7:00էն 8:00:



«ԼԱՐՔ»Ի ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԸ

Շարունակուած էջ 7-էն

եանի, Սեւակի, Չարենցի բանաստեղծութիւններէրից, Մինասի, Սարեանի գոյներից, Կոմիտասի երաժշտութեան հնչիւններէրից կերտել նրանց ազնիւ եւ հայեցի նկարագիրը, փորձում ենք հայկական շունչի փոխանցել լինել երեխաներին:

Այստեղ իւրաքանչիւր մանկավարժ քաջ գիտակցում է, որ գործ ունի ոչ թէ կոշտ քարի, կամ անխօս փայտի հետ, այլ զգացող ու մտածող կենդանի էակներ ի հետ: Միաժամանակ ծնողներին հնարաւորութիւն է տրուում գրողներու եւ կիսուելու իւրաքանչիւր մանկավարժի հետ, նաեւ անհանգստացնող հարցերով դիմելու Վաչէ Պարտումեանին (հիմնադիր վարիչ), Թագուհի Արզումանեանին (տնօրէնուհի), Շուշիկ Պարտումեանին (ընդհանուր հսկիչ):

Այստեղ ուզում եմ յիշել մեր սիրելի, Լարքի նուիրեալ պրն. Վարդգէս Պետրոսեանին, առանց որի դժուար կը լինի մեր աշխատանքների կազմակերպումը:

Մեր աշխատանքներում իրենց մեծ օգնութիւնն են բերում նաեւ մեր կամաւորները՝ Մեղրի Պապիկեանը, Անի Մուրատեանը, Ճեննի Միրզոյեանը, Լուսինէ Քուլանիքեանը, Արեւի Պետրոսեանը:

Քանի որ Լարքի ամառային ճամբարի աշխատանքները նախատեսուած են շաբաթական յայտագրերով, մենք իւրաքանչիւր Ուրբաթ կազմակերպում ենք հանդէսներ ներկայացնելով մեր քրտնաթոր եւ քրտնամաշ աշխատանքի արդիւնքը:

Մենք համոզուած ենք իւրաքանչիւր ծնողին, որ մեզ մանկավարժներին համար իւրաքանչիւր ակնթարթ որոնում է եւ յայտնու-

թիւն, աշխատանքի տքնանք եւ տքնութեան մրգահաւաք:

Յարգարժան ծնող, Մանուկի ծնունդը ընդամէնը ձեզ հայր ու մայր փառահեղ կոչումն է շնորհում: Դրանով ձեր ուսերին է դրոււմ այն հաստատելու եւ վաստակելու դժուարին եւ սուրբ գործը:

Մաղթում ենք ձեզ ամենայն մայրութիւն, ամենայն համբերութիւն, ամենայն երջանկութիւն:

Թող ձեր ծնողական սիրտը միշտ ցնծայ հրճուանքից, թող ձեր ճակատը փայլի հպարտութեան լուսապակով, թող ձեր շուրթերը սրբանան աղօթքով:

Թող բարի լինեն ձեր լուսեղէն զաւակները, որոնք նաեւ մերն են, մեր ազգինը:

«Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական դէպի դարերը նորից»:

Մեզանից քանի՞սը կարող են չարենցեան այս ինքնավատահոլութիւնը ունենալ: Եթէ կան այդպիսիները, հազար փառք նրանց:

Ես այդպիսիներից մէկն եմ: Բայց նաեւ հաւատում եմ, որ միայն կամքով չէ, գործն է անհրաժեշտ:

Ուրեմն գալիքին ընդառաջ գնանք, գնանք աննկուն կամքով, հարուստ գիտելիքներով, բաց ճակատով՝ յոյսերս մեր վրայ դնելով... Եւ ամէնից կարեւորը այս օտար ափերում մեր զաւակների հետ անվերջ հայերէն խօսելով, յիշելով Պ. Սեւակի խօսքը.

Իսկ իսկութիւն չէ՞
Որ գորքից յետոյ
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
Եւ ինչ չի կարող ո՛չ մի գորք անել՝
Լեզուն է անում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 13-էն

արտայայտութեան:

12 Սեպտեմբեր 1991 թուական, ազատ քուէարկութեամբ միակամ ու միաձայն իր պետական նոր աւագանիին հետ հայ ժողովուրդը իր կամքը արտայայտեց անկախութեան մասին: 1991 թ. Սեպտեմբեր 21ին ծնունդ առաւ Հայաստանի նոր եւ անկախ Հանրապետութիւնը:

Սակայն անկախութեան այս անմեռ տենչն ու անընկճելի կամքը, ազատութեան համար հերոսական պայքարը կու գային դարերու խորքէն՝ աւելի քան 4500 տարիներ առաջ Հայոց Զորի մէջ ազատութեան համար մղուած պատերազմի հերոսական ակունքէն, երբ Հայկ Նահապետ իր լայնալիճ աղեղէն արձակած երեքթեւեան նետով պատուեց սպառնացող թշնամիին կուրծքը, գետին տապալելով բռնակալ Բելը:

Դարերու խաւարը իջած էր ազատասէր հայութեան պատմութեան վրայ: Աշխարհակալ տէրութիւններ, աւաղ, հետզհետէ կործանած էին հայ ժողովուրդի ստեղծած պետական կառոյցներն ու թագաւորութիւնները, երբ աշխարհակալ Արտաշէսներու, Մեծն Տիգրանների, Երուանդունիներու, Արշակունիներու, Ածրունիներու, Բագրատունիներու, Ռուբինեաններու եւ Հեթումեաններու փառաշուք գոյապայքարներն ու յաղթանակները դարձեր էին լոկ պատմութիւն:

Ազատութեան սրբազան հուրը, սակայն, անշէջ մնաց հայու սրտին մէջ: Երկարատեւ դարերու խաւարը չկրցաւ մարել անթեղուած կրակը հայ հոգիին մէջ, իր կեանքին գիտով տոկաց ու զոհողութեան մեծագոյն զայրուածներով համբերեց, ու Արցախեան նոր շարժումով՝ ինչպէս Աւարայր ու նոր Սարգարապատ մը, դարձեալ տէրը դարձաւ իր անկախութեան: Բաւ է, ալ հայը հպատակ չէ ասորիին, հռոմէացիին, յոյնին, պարսիկին, արաբին, սելճուք-մոնղոլին, թուրքին կամ ուսուին, ան հպարտ քաղաքացին է իր անկախացած երկրին եւ նորաստեղծ պետականութեան:

Գուրգուրալ պէտք է արիւնով ձեռք բերուած, գերագոյն զոհողութիւններով՝ արցախեան հերոսամարտի, երկրաշարժի արհաւիրքի, ցուրտի, մութի եւ սովի փորձառութիւններու քուրայէն անցած այս անգնահատելի նուաճումին վրայ: Կեանքի բոլոր ասպարէզներ-

րով՝ ընկերային, քաղաքական ու դիւանագիտական, տնտեսական եւ ռազմավարական մակարդակներով հարկ է միշտ հերոսաբար պաշտպանել անոր անվտանգութիւնը, որպէսզի աճի, զարգանայ եւ հզօրանայ՝ ի բարօրութիւն Մայր Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ անոր փառքը կերտող հայ ժողովուրդին:

Պատմութիւնը կ'աւանդէ, թէ հռոմէացի մայր մը իր նորածինը սնած ատեն, իր մայրական կաթին հետ անոր թոթովոյ շրթներուն սա կարգախօսը կը փոխանցէր. «In aeternum apud Roma - Յաւիտեանս քեզի հետ Հռոմ»:

Ու ես ամէն հայու սրտով եւ վառ ապրումներով այս Ս. Խորանէն պիտի ըսեմ. «In aeternum tecum et tibi, Armenia - Յաւիտեանս քեզի հետ եւ քեզի համար Հայաստան»:

Բիւր օրհնութիւն յաւերժական Հայաստանին, բիւր փառք հայրենիք կերտող եւ հայրենիքով վերակերտող ու յաւերժացող հայ ժողովուրդին»:

Քարոզի աւարտին, պատարագիչ Տէր Հայրը դաս հրաւիրեց ՀՀ Արտաքին Գործերու Փոխ-Նախարար՝ մեծարգոյ տիար Արման Կիրակոսեանը, որ նոյնպէս անկախութեան նուիրուած իր պատգամը ուղղեց ներկայ ժողովուրդին:

«Հանրապետական Մաղթանք»ը նոյնքան հոգեյոյզ եւ հայրենասիրական ապրումներով կատարուեցաւ մեր հոգեւոր հայրերուն կողմէ, շարականներու երգեցողութեամբ, Հայաստանի հանրապետութեան անվտանգութեան, հայոց պետականութեան եւ բանակի հզօրացման, երկրի անասանութեան եւ ժողովուրդի բարօրութեան համար:

Եկեղեցական արարողութիւններու աւարտին, պետական հիւրերն ու Զուրիցերիոյ հայ համայնքի ազգային-մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչները՝ մասնակցող ժողովուրդին հետ հրաւիրուեցան եկեղեցոյ ներքնասրահը, ուր հայկական փառերգի ոգեշունչ երգեցողութենէն ետք, սուրճով եւ հայկական քոնեակով ճոխացած սեղաններու շուրջ, հպարտ եւ ուրախ ժպիտներով գիրար շնորհաւորեցին մեր միասնական հայրենիքի՝ «Հների մէջ՝ ալեհեր, նորերի մէջ՝ նոր ու ջահել» Հայաստանի անկախութեան սօսին առթիւ:

Ներկայ մը

ՅԱԿԱԿՑԱԿԱՆ

ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով՝ Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ ձերէճեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսինին Տիար Արշակ Գալէնտէրեանին, մասնաւորաբար՝ Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուկ Գազանճեանին, Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեանին եւ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 380-րդ կայանից

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

ARMENIAN INDEPENDENCE DAY

ՓԲՖ ՄԱՂՄԱՍՈՒՆ

SUNDAY SEPTEMBER 26, 2010

VERDUGO PARK, GLENDALE



ԵՐԳ ՈՒ ԳԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՐՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

Live Music
Dancing
Art Work Exhibition
Kids Games
Armenian Food



To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Չե՞ր կրպակները ապահովվա՞ր համար
Վե՞րահայնե՞ցե՞ր Նոր Սերունդ Աջակցության Այլուքեան
(818) 391-7938

Cosponsored by the City of Glendale

Media Sponsors



Sponsors

